



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՆ,

՚Ի ՍՈՓԻԱՅԷ ՄՍԵՐԵԱՆՑ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

„Ո՛ւն է անագան քան ո՛չ երբէք“ (Ասա՜) :

ՏԵՏԻ Ե.—(ՅՈՒՆՈՒՆԸՐ-ՓԵՏՐՈՒՆԸՐ)—1881 ԵՄԻ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

- «ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» հանդիսի նիւթն է՝ Պատմական, Բանասիրական, Քաղաքական և Ազգային գիտելիք:
- «ՓԱՐՈՍՆ» լինելով պատկերազարդ հանդէս՝ խնդրում է պատուելի ազգայնոց առաքել նորան, տպագրութեան համար, Ազգային հեղինակաց և երեւելի անձանց, Հայաստանի հնութեանց և նշանաւոր տեղեաց պատկերներն, նոցա համառօտ նկարագրութիւններով:
- «ՓԱՐՈՍԻ» խմբագրութիւնն ուրախութեամբ կընդունէ տպագրութեան համար ազգային մատենագրութեան և ազգային կենաց վերաբերեալ յօդուածներ, ազգային վէպեր, ոտանաւորներ, և այլն:
- «ՓԱՐՈՍՆ» հրատարակի ՚ի Մոսկուա վէջ անդամ ՚ի տարին, այն է՝ երկու ամիսն մէկ անգամ:
- «ՓԱՐՈՍԻ» տարեկան գինն հանդերձ առաքմամբ է 5 ռուբլի: Իսկ առանձին առանձին գնողների համար՝ իւրաքանչիւր տետրի գինն է 1 ռ. հանդերձ առաքմամբ:
- «ՓԱՐՈՍԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆ հասցէն այս է. Москва, Меньшикова башия, домъ Милованова. (Մոսկուա. Մէնշկերովա բաշնեայ, տուն Միլովանովի):

՚Ի ՄՈՍԿՈՒՆ

IMPRIMERIE A. A. GATZOUK.

à Moscou, au pont des Maréchaux, maison Torletzky.

1881.

Հանդիսիս ներկայ տետրի համար նշանակուած ՍՐԲԱԶԱՆ ՆԵՐՄԻՍ ՊԱՏՐԻԱՐԷԻ նոր պատկերն լինադրատան անփոյթութեան պատճառաւ չը կարողանալով պատրաստուիլ, մնաց յաջորդ տետրիս:



ԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդէսն 'ի Տէրութենէ ստացեալ նոր թոյլառութեան համաձայն, պիտի հրատարակուի 'ի տարին ոչ չորս անգամ, որպէս ծանուցած էինք մեր յայտարարութեան մէջ, այլ չէյ անգամ, այն է՝ երկու ամիսն մէկ անգամ (Յունուարին, Մարտին, Մայիսին, Յուլիսին, Սեպտեմբերին և Նոյեմբերին): Նորա իւրաքանչիւր տետրն պիտի բովանդակէ իւր մէջ 2¹/₂—3 քառաձալ թերթ 10—12 պատկերներով:

Տարեկան գինն, չը նայելով թերթերի և պատկերների աւելման, մնում է նոյն, այն է՝ 5 րոպէի հանդերձ առաքմամբ, կանխիկ վճարելի:

Իւրաքանչիւր տետրի գինն, առանձին առանձին գնողների համար է 1 րոպէի, նոյնպէս առաքմամբ:

Խոստացան միշտ աշխատակցելու մեզ՝ պ. Չարմայր Մ. Մսերեանց, Տ. Ասողիկ*, Մոծակ*, Ս. և Օ. Մոսկուայում.— պ. Արմենակ Սիւնի*՝ Տիֆլիսում.— պ. Կ. Աղամյանեանց և Ջիւան*՝ Ալեքսանդրապոլում.— պ. Տ. Փ., պ. Տիգրան-Աշոտ*, պ. Միրզա Մսերեանց, և պ. Լուսարար-Փարոսի*՝ Կ. Պոլսում.— պ. Գ. Մսերեանց՝ Չմիւռնիայում.— պ. Յ. Չաքրեան՝ Զէյթունում, և այլք՝ որոց անուններն դեռ իրաւունք չունենք հրատարակելու: Ունիմք նաև սեպհական թղթակիցք՝ Լոնդոնում, Փարիզում, Կ. Պոլսում, Կարին, Վան, Հապահան, Բագու, Երևան և այլ տեղեր, որք միշտ պիտի հաղորդեն մեզ ազգային տեղեկութիւններ և ճոխացնեն մեր հանդէսը ազգային պատկերներով:

Ծանօթ.՝ Աստղով նշանակուած անուններն կեղծանուն են (Փոփոքնի՛մ):

ՏԱՐԵՑՈՅՑ ՓԱՐՈՍԻ

1881 թուականին քրիստոսի և ՌՅԼ—ՌՅԼԱ (1330—1331) ազգիս Հայոց:

ՏԱՐԵԹԻԻՔ:

Ի սկզբանէ աշխարհի	7.389
Ի սկզբնաւորութենէ Հայոց թուականիս	ՌՅԼ
Ըստ Հայկայ շրջանին	4.372
Գ. Շրջանին Հայկայ	1.452
Փոքր թուոյն Հայոց ըստ Ազարիայի	ՄԿԵ

ՏԱՐԵՄՈՒՏՔ:

Բուն թոյն Հայոց 4.373	Օգոստ.	11
Հայոց թուականին ՌՅԼԱ	»	13
Փոքր թուոյն Ազարիայի ՄԿԶ	Մարտի	21
Գ. Շրջանին Հայկայ 1.453	»	9
Թուականին քրիստոսի 1882	Յունուարի	1

ՀԱՄԱՌՕՏ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԱՅՈՅՑ 1881 ԱՄԻ:

Օր ԾՆՆԻԵԱՆ	Ի Յուն.	6	Համբարձումն	Ի Մայիսի	21	Բարեկ. Վարագ. Խաչ . . .	Ի Սեպտեմ. 20	
Միջոց ուտիք, աւուրք		27	Հողեզալուստ	»	31	Միջոց ուտիք, շաբաթք	Եօթն.	
Բարեկենդան Առաջ	Ի Փետրվ.	1	Բարեկ. Ս. Լուսաւորչի . . .	Ի Յունիսի	21	Գիւտ Խաչ	Ի Հոկտ. 25	
Օր ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ	»	14	ՎԱՐԻԱՎԱՌ	Ի Յուլիսի	19	Բարեկ. Յիսնակաց . . .	Ի Նոյեմբ. 15	
Բուն բարեկենդան	»	22	Միջոց շաբաթք պահովք	Չորք.		Բարեկ. Ս. Յակ. պհ . . .	Ի Գեկտ. 6	
Օր Աւետման	Ի Ապրիլի	7	ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ	յՕգոստ.	16	Ս. Յակոբ	»	12
ՉԱՏԻՎ	»	12	Միջ. շաբ. պահովք	Չորք.		Միջոց ուտիք, աւուրք		17
Երևման Խաչ	Ի Մայիսի	10	ԽԼՉՎԵՐԱՅ	Ի Սեպտեմ.	13	Օր բարեկ. Ծննդ	Ի Գեկտ. 29	

ԱՌՈՒՐՔ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԵԻԵԼԻ ՀԱՅԿԱԶԱՆՑ:

✱ Փետրվար. 6. մահ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց (1857):—13. մահ Ներսէս Ե. Կաթողիկոսի ամենայն Հայոց (1857):—Մարտ. 19. մահ Յովսէփայ Գ. Կաթողիկոսի (1801):—Ապրիլ. 5. մահ Միքայէլի Միանասրեանց (1880):—8. մահ Գաբրիէլ արք եպիսկոպոսի Այվազեանց (1880):—16. մահ Ճանիկայ Արամեան (1879):—26. մահ Ստեփաննոսի Նազարեանց (1879):—Մայիս. 24. մահ Յարութիւն վարդ. Աղամբարեան (1834):—28. մահ Ղուկասու Գ. Պարզազարեան (1878):—Օգոստոս. 2. մահ Մսերայ Մ. Մսերեանց (1873):—14. մահ Յովհաննու Գալթեան Լազարեանց (1879):—19. մահ Միքայէլ արքեպիսկոպոսի Սալմանթեան (1851):—22. մահ Մատթէոս Կաթողիկոսի (1865):—29. մահ Կարապետ վարդ. Շահնազարեան (1865):—Հոկտեմբեր. 14. մահ Ղազարայ Յովակիմեան Լազարեանց (1871):—Գեկտեմբեր. 9. մահ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց (1871):

ՀԱՅԵՐԵՆ ԼՐԱԳԻՐՔ ԵՒ ԱՄՍԱԳԻՐՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ 1881 ԱՄԻ:

1. Աբարա՛մ՝ ամազգիը կրօնական, պատմական, բանասիրական, բարոյական և ազգային, հրատարակի իւրաքանչիւր ամսոյ վերջում: Տարեկան գինն է՝ 4 ռ.
2. Մշակ՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ռ.
3. Մէղր՝ Հայաստանի՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ռ.
4. Փոքր՝ ամազգիը բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ռ.
5. Պոսի՝ լրագիր գրականական, պատմական և մանկավարժական: Տարեկան գինն է՝ 4 ռ.



ԵՐՐՈՐԴ

ՏԱՐԻ

ԵՐԿԱՄՍՅԱՅ ՀԱՆԴԻՍ ՓԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏԵՏՐ Ը

ՅՈՒՆՈՒԱՐ—ՓԵՏՐՈՒԱՐ

1881 ԸՄԻ

ՏԻԿԻՆ ԱՆԺԷԼ ԱՊՐՕ

ՏԻԿԻՆ ԱՆԺԷԼ Ապրիլի 11-ին ծնունդ առնելով Երևանի մարզի Մարտիկ գյուղում, 1880 թվականին:

Մայրը Սարգիս Գևորգյանի և Մանուկի Գևորգյանի զուգարկուհի էր:

Մայրը, քաջ հմուտ աղագային և երոպական լեզուաց և գեղարուեստից, քաջաձանօթ է մեզ մանուկանդ իւր ազգասիրական եռանդով, և ախար



ՏԻԿԻՆ ԱՆԺԷԼ ԱՊՐՕ
 Հիմարի և Արեւադեղի «Ազգանուէր Հայունեաց ընկերութեան»:
 (Պատկերը նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)


է իւր սեռին կատարելութեանց: Եմուտն առնելով է նա ընդ Սահակ Ապրիլի Լեֆէնտի, Չմիւռնացի Ապրիլի գերդաստանէն, որ ինչպէս յայտնի է թուրք կառավարութեան բարձրագոյն պաշտօնեայնէն ընդ մին է, և նորա աշխարհավարական գործոց մէջ մեծ դեր ունեցած է: Աւերջին իսկ Վրան ներկայացուցիչն էր Արեւելեան-Ռուսիայի միջազգային յանձնաժողովին մէջ:

Մանուկանուցից ի շնորհս ջանից և գեղեցիկ անուանն Տիկին Ապրիլի «Ազգանուէր Հայունեաց ընկերութեան», իմէ իւր քիչ ժամանակի մէջ կատարած յառաջադիմութենէն դասիմք, մեծ արդիւնքներ կը խոստանայ յապագային, քանզի մինչ ցարդ Հայաստանի մէջ երկու ազգիանց զպրոց

Հաստատած է, ընդ հովանաւորութեամբ «Միացեալ Րնկերութեան»: Հաւաստի պէտք է լինիմք, որ երբ Ազգային տիկնայք կ'աշխատին այսպէս

ազգին ապագան պատրաստելու, պիտի յաջողին կատարելագէս: «Ce que femme veut, Dieu le veut».

Կ. Պօլէ 1880.



ՄԻ ԲԵՐՁՐԵԸՆՈՐ Հ ԵՒ ԱՄԵՆԱՊԵՏԻ

S. S. Ն Ե Ր Ս Է Ս

ՄԻԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԱՋԳԱՆՈՒԷՐ ԲԱՐԵՐԱՐՆ ՀԱՅՈՅ:

Եւբէ եղբարք բոլորուելու
Պահին քովեր Հօրն Հայուն,
Եռէք ծաղկունս, փունջ կապելու,
Որ զարդարեմք իւր վեհ սնուն:

Նա՛ շայր է մեզ ճշմարիտ,
Որ կը հսկէ անվթիթ.
Նա՛ նոր Մովսէս երկնանուէր,
Որ կը տքնի անձնուէր
Մեզէն հանել անվհաս՝
Հայն առաւպէն յուսահաս:

Որքին հեքին և հայրենաց՝
Նա կըստիփէ տխուր լալին
Եւ ազգային սուրբ իրաւանց՝
Մատաղ կը սայ իւր կեանք սղջին:

Օ՛ն արդ փութամք ՚ի հանդէս
Տօնել զմերն նոր Կերսես,

Որ իւր շորս դին ՚ի սփիւռ
Կանգնէ տաճարս լուսասփիւռ.
Հոն քաւելու դարաւոր
Ազգին վշտեր բերաւոր:

Որ փրկութիւն ազգի միայն
Ռեխտեց ունել նշանաբան,
Եւ անինայ ճգնի ահա՛
Հայրենական փառաց վերայ:

Արեան ծովէն փոթորկուն,
Ուր ազգն անկաւ անկայուն,
Նա կերկարէ զիւր բաղուկ
Մնկեալ Հայուն տալ նեցուկ...
Կեցցէ՛ Հայր մեր պնտուական
Կեցցէ՛ Կերսէս Սրբազան:

Կ. Պօլէ 1880.

Յարմարեալ Չափեան:

ԿՈՄՍ ԼՈՒԻՍ-ՄԷԼԻՔՈՎ

ՄԻԲԱՋԱՆ Պատրիարքն Կ. Պօլսոյ Կերսես, դառնալով Ռուսաց դեսպանին, ասաց՝ «Նախախնամութիւնն չէր կարող աւելի լաւ վարձատրել Հայոց ազգը՝ ինչպէս դնելով Կոմս Լուիս-Մելիքովին ՚ի գլուխ Հայոց, որք իւրեանց կեանքը նուիրել են ՚ի ծառայութիւն Ապստոսի և Ռուսիոյ»:

Յիրաւի, Կոմս Լուիս-Մելիքով առաջին եղաւ Հայերի միջոց, որ արժանացաւ հասանել Ռուսիոյ մէջ այն մեծ պաշտօններին, որ ունի նա այժմ: Յետ լինելոյ Գլուխ Բարձրագոյն Կարգադրիչ Ժողովոյն, նա նշանակուեցաւ Նախարար Կերքին Գործոց. և այն ամենայն՝ ինչ կատարեց նա Ռուսիոյ համար մինչև ցայժմ, սակաւ միջոցում, ունի մեծ նշանակութիւն թէ՛ ներկայ ժամանակին համար, և թէ՛ ապագայի համար:

«Ղեկավարութիւնն պահանջում է ասել, ասում է մի ուսուցիչը, թէ յետ Կայսեր, գլխաւոր վաստակքն մեր ներքին քաղաքականութեան այսպիսի բարեյաջող փոփոխութիւն ստանալոյն պատկանում է անձնի, որ կէս տարւոյ ընթացքում, ամուր ձեռքով հաշտեցրեց տէրութեան կանգնուած հասարակութեան հետ, կանգնեցնելով ամենայն տեղ հանգստութիւնը, կենդանացնելով յոյսերը՝ օրինաւոր օգուտները բաւականացնելու, և ձգտելով մտցնել յազալութիւն այն

տեղ, ուր տիրում էր զայրացողութիւն, վերականգնել բարոյական քաջութիւնն պատուաւոր սրտերի մէջ, որոց արդէն սկսած էր պատել վհատութիւնը: Հերոսն, պատկուածն յաղթական դափնիներով պատերազմի մէջ, որ ունեցաւ մեր հայրենիքն (իմն Ռուսիայն) ճնշեալ ազգերի ազատութեան համար, գործ ունեայ և բազում կարգադրիչն այն միջոցների, որք ազատեցին զՌուսաստան ժանտախտի տարածումից նորա լայնատարած սահմաններում, ժանտախտից՝ որ իւր ներգործութեան սկզբում պատճառեց մեր առևտուրին արդէն տասնեակ միլիոնների վնասներ, — Կոմս Մելիքով Գարիէլեան Լուիս-Մելիքով՝ ժառանգեց Ռուսիոյ առանձին շնորհակալութիւնը, որպէս ներքին ազմիկի նուաճող, որպէս տէրութեան հանգստութեան վերականգնող, որպէս կենդանացնող մեր հասարակութեան ամենագեղեցիկ մասնի յոյսերի հասանելու ազգային բարօրութեան յազալական կերպով, որ ստեղծվում է և հաստատվում միայն իրաւունքի և օրինաւորութեան տիրապետութիւնով»:

Մէկ ուրիշ ուսուցիչը խօսում է Կոմսին մասին այսպէս.

«Խորիմաստութիւնով, առանց սասանութեան, առանց աւելորդ արեան և արտասուաց, գրում է օրագիրն, ՚ի կատար հասոյց Կոմս Լուիս-Մելիքով իւրեան յանձնուած գործը: Չանցաւ և կէս տարի ՚ի ժամանակէ հաստատութեան բարձրագոյն կարգադրիչ ժողովոյն, և կարգն արդէն վերահաստատուեցաւ, հասարակութիւնն հանգստացաւ, և արտաքոյ կարգի միջոցներն դադարեցան: Մուայլ ժամանակն շփոթ ազմիկի և երկիւղի փոխուեցան նախ յոյսի, և ապա լուսաւոր միամտութեան, և այդ միամտութիւնն ամբողջութեամբ օրինաւոր է:

Փոփոխութիւնքն, որք կատարուեցան վերջին ժամանակ վերին կառավարիչ դասի մէջ, բարձր անպահանջութիւնն, որ ունեցաւ կայսրն առ մարդն՝ որ այդպէս փառաւոր կերպով լցուց բարձր Ռուսիոյ յոյսը, — այս ամենայն յայտնապէս ցոյց է տալիս, թէ դժուարութիւններն անհետացան, թէ հասարակութիւնն կարող է հանդարտ ընթանալ դէպ ՚ի լուսոյ և ճշմարտութեան թաղաւորութիւնն: Մարդն, որ դարձուց դպրոցներին և գերդաստաններին հազարաւոր երիտասարդներ, մարդն՝ որ առաւ ուսուցանողութեան կարողութիւն յայտնել իւր «սրտի ցաւը», մարդն՝ որ գործով ապացուցեց իւր անհակամէտութիւնը առ անկենդան և կործանող ընթացքն մեր կրաստիկական դպրոցի, այդ մարդդ՝ յաւիտեան ժառանգում է ուսուցանողութեան շնորհակալութիւնը և յարգանքը:

Ուսուցանողութեան և ուսուցանողութեան այսպիսի միաձայն գովասանութիւններէն յետոյ,

որոց արժանանում է մեր ազգակիցն Կոնստանտին Մէլեքով՝ մնում է արդեօք մեզ Հայերիս յաւելացնել ինչ այդ գովասանութեանց վերայ: Այո, մնում է խնդալ միայն և երգել միաբերան՝

Օ՛ն, խնդա՛ Հայաստան, օր քեզ արդ յնծութեան,
 Ի՛քէն է, քո՛ է Կոնստանտին Մէլեքով մեր Իշխան:
 Մաղթեցո՛ւք ազգակիցն. կեցցէ՛ նա ընդերկայս,
 Անվտանգ, անվիանգ, միշտ յէին օրհնութեան:

Հանդիսիս ներկայ տետրիս մէջ (յէջ 4) տպագրում ենք, ՚ի 17 էն Յունուարի ներկայ ամի, Բարձրագոյն հաստատուած Կոնստանտին Կոնստանտինովի նշանակը (перот):



Ա Ի Ե Տ Ա Բ Ե Ի Է Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

» Ո՛ւ ես դու չքնադդ, նազելի պատկեր,
 » Որ կամիս սրբել Հայու արցունքներ.
 » Ե՛կ, ո՛վ գեղեցիկդ, պատմիր ո՛վ ես դու,
 » Ե՛յս աշխարհի թէ՛ երկնայինդ լոյս դու:

» Երբ՛, մօտեցիր պաշտպան հայութեան,
 » Սէր և միութիւն լէր հայ ազգութեան.
 » Յոյս և ապակէն լէր Հայաստանի,
 » Եւ ասող լուսատու խաւար զիշերի:

Պարձաւ դէպ ՚ի ինձ նազելի կոյսը.
 Երա երեսին փայլում էր լոյսը.
 Տուեց ինձ բարև ժպտագին դէմքով,
 Եւ ասաց այսպէս մեղմագին ձայնով.

» Եւտում եմ քեզ ո՛վ խեղճ պատանի,
 » Այլ ևս մի՛ թափեր արտասուք աղի.
 » Բաւ է որքան որ հայրենեացդ վիշաք
 » Կտրատեց, խոցեց քո մանուկ սիրտը:

» Բո անմահ նախնեաց, որոնք սուրբ խաչի
 » Եղան ախոյեան և հայրենիքի,

» Թափած արիւնը Աստուած ընդունեց,
 » Ինձ Աւետարներ քեզ մօտ ուղարկեց:

» Կը գայ ժամանակ, դարձեալ օր արգար,
 » Կը թաղաւորէ հայոց ոսկերար.
 » Հայրենեացդ վաղուց փառքերն ընկճուած,
 » Պարձեալ կը տեսնես վերանորոգուած:

» Պիտացիր հաստատ որ քո նախահարց
 » Թափած արիւնը ՚ի զուր չէ անցած,
 » Այլ մեն մի կաթիլ նոցա սուրբ արեան,
 » Պիտի բարոքէ ազգիդ ապագան:

» Եյն աւերակներ, որոնց տեսնում ես,
 » Եւ աղի արցունք միշտ դու թափում ես,
 » Կը գայ ժամանակ որ նրանք մարդկութեան
 » Կը լինեն տաճար լուսաւորութեան:

Եյս խօսքերից յետ նշան աւետեաց,
 Տուեց ձիթեղու մի ճիւղ նոր ծաղկած.
 Տուեց ինձ բարև, շուտով հեռացաւ,
 Գէպ ՚ի Հայաստան թաւ սլացաւ...

Տիբե՛ 1880:

Արմենա՛յ Սիւնի՛:

Մ Ի Ր Զ Ա Յ Ե Ա Ն Մ Ա Ն Ո Ւ Կ Պ Է Յ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Վ Ա Ր Ո Ւ Յ Ե Ո Ր Ա *)

Գործ Մ. Մ. Մաքեմանց:

ԳՎ. Օ:

ԴՌՆՈՎՆԵ՛ մի է ՚ի վիճակաց Երկրագործայ դաւառի, ոյր քաղաք համանուն առ կողիւք կայ լիբանց Պաղզանայ. ընդ մէջ նորա հասեալ ընթանայ գետ քարավէժ, և են շուրջ գնովաւ անհամար պարտէզք զուարճալիք: Օհրկիր նորա զարգաւանդ և զբարեբեր մշակէին յայնժամ ժրաջան հողագործք յազգէ Տաճկաց և ՚ի Բուլղարաց, որոց և կանայք

անգամ և զսակք պարապէին խնամով ՚ի բոյժ մետաքսագործ որդանն՝ զոր մեք Շէրաս անուանեմք կամ Շէրամ: Այլ սոցա չգոյր ազատութիւն վաճառել ոյց և իցէ զմետաքս իւրեանց ըստ կամի. այլ տալ պարտ էին զայն փոխանորդի կալուածատեսառն (Ալջալապայի) ըստ միանգամն նշանակեալ զնոյ՝ որ նուազ ինչ էր քան զիսկական արժէտն գրեան թէ կիսով մասամբ. ուստի որք զպաշտօն զայն ունէին՝ շահ մեծ գումարէին անձանց ամ ըստ ամէ:

*) Ըարունակութիւն. տես հանդիսիս նախընթաց տետրն:

Եւ զի ԳՌՆՈՎԱ չունէր իւր առանձին քաղա-

քապիա, փոխանորդն ևս (որում յայլ քաղաքս օրէն էր ընդ իշխանութեամբ լինել քաղաքապետի), ինքնիշխան կայր անդանօր՝ գոլով կարգեալ ուղղակի 'ի Տէրութենէ: 'ի հերուն հետէ խորհէր Մանուկ զպաշտօն զայն 'ի բուռն ձգել թիրսենիքլեայ. մի՛ վասն ընդարձակելոյ նովաւ զվիճակ նորա. և երկրորդ՝ զն աճեցուցէ զմուսս հասիցն. այլ յառաջագոյն խոչ մեծ առ այս այն էր՝ զն յօրվագոյն դրամոց պէտք էին 'ի վարձել զայն տարևոր ժամանակաւ. իսկ այժմ 'ի վերանալ յառաւելուլ թիր-

յաջողութեանցն թիրսենիքլեայ, խորհեցան զամահու նիւթել Մանուկայ՝ օրինակ զայս: Առաքեցին զարս ոմանս յուզել կեղծօք զազմուկ կագոյ առ դրամբ տանն Ապտի Պայրաքտարայ՝ ուր հիւրութեան էր Մանուկ. իբր զն յերանել նորա արտաքս ընդ այլոց՝ որպէս 'ի զէպ իսկ էր կարծել՝ 'ի շփոթս անդ խռանն սպանցեն և զնա: Արարին արքն որպէս պատուիրեցանն. և ընդ ծագել խռովութեանն ծառայք Ապտի Պայրաքտարայ վազեցին 'ի դուրս՝ տեսանել զինչ իբր իցեն. և անդէն մի



Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ Բ Ո Ւ Լ Ղ Ա Ր Բ

(ԽԷ՝ ԷՂ 3):

սնիքլեայ յիշխանութեան և Մանուկայ՝ յարժանապատուութեան, անյոյս չթուէր խորհրդոյն աջողումն: 'Նմին իրի կամբ եղին Մանուկայ յետ ելցն 'ի Արստանդնուպօլսէ՝ առուրս ինչ զտեղի առնուլ 'ի Վանուկ 'ի գրաւել զհաճոյս ժողովրդեան. ուր և իրազնի լեալ՝ թէ հիրձուած է 'ի քաղաքին՝ կիտոց զՎազվանթայ կալեալ զկողմ, և սակաւուց ոմանց զթիրսենիքլեայ, փոյթ 'ի մէջ առնոյր զապաւ միջնորդութեամբ բարեկամացն յինքն արկանել զբազումս՝ խտորեցուցեալ 'ի Վազվանթայ: Ախացան ընդ նա վասն այսր սերտ կուսակիցք Վազվանթայ, և յանհնարս մտեալ այլազգ ինչ խափան առնել

ոմն 'ի նոցանէ անկաւ վերահար՝ մինչ չև ելեալ էր Մանուկայ 'ի տանէն: Յայնժամ և Ապտի Պայրաքտար, և որք 'ի ներքս 'ի տանն էին, 'ի պաշտպանութիւն անձանց փութացեալ՝ սկսան հրացան զնուքն գնդակաձիգ լինել 'ի խռովարարսն, ուր և սպանին զմի զոք յարանց Վազվանթայ: 'Վ տեսիլ չարաղէտ անցիցն խռնեցաւ խռոթեցաւ ամենաւատեք մարդակոյտ մեծ. և այր զարամբ երեալ՝ սաստկանայր վերանայր խտոնաձայն կանչոյ աղաղակ նոցա յամենայն կողմանց: Մինչ այս մինչ այն՝ 'ի միտս եկեալ Մանուկայ, և իմացեալ զբուռն զգողչնորոգայթ պատճառս իրացն,

և զաղանկաւ ընդ դռնակ մի 'ի թիկանց կողմանէ տանն. և այն ինչ ձի 'ի վեր առեալ աճապարէր 'ի փոխուստ, անդէն և ամբօխ դաւադրացն ձիաթափ 'ի վերայ յաշտակեալ՝ զհաւ պնդեցան նմա իբրև 'ի գնացս երկուց ժամուց անդր քան զսահմանսն Վառնովայ: Եւ Վանուկայ ճողոպրեալ զանձն քաջընթացութեամբ իւրոյ երիվարին՝ եհասողջամբ 'ի Ռուսջուզ:

Չէքոյց զՎանուկ յաշխատասէր փութոյն այս անցք չարաբեր. զի միայն զաւուրս երիս կացեալ նորա 'ի քաղաքին 'ի պատրաստութիւն զրամոյ, անդրէն վերստին ճանապարհաւար 'ի Աոստանդուպօլիս բան դնել ընդ Տէրութեան 'ի գին կալուածոցն Վրանովայ: Եւ թէպէտ անդանօր ևս չպակասէին նմա խոջք՝ ընդունայն գործել զվաստականայլ հանձար նորա մեծախոջ ընդ գեղեցիկ համարձակութեանն՝ յաղթական գտաւ ամենայն զժուարութեանց: Զի իբրև ձախողակ առ խընդիրսն նորա եղև պատասխանի, որ պէտքէ յամին յայնմիկ տուեալ իցէ այն կալուած՝ Բազվանթ Օղլայ, ոչինչ վհերեաց ջատագով հզօր հանդիսանալ

Թիրսենիքլայ յատենի նախարարացն. և սպա առանձինն զբան իրաւանց 'ի մէջ առեալ 'ի խօսելն ընդ Իպրահիմ Լֆէնտեայ՝ ՊՆՂ գիտեմ, ասէ, էր աղագաւ անտես է տէրութեանն զհաւատարմին իւրոյ Թիրսենիքլայ զաղաչանսն, և այն՝ 'ի շնորհս Բազվանթ Օղլայ տիրանարգ թշնամոյ: Վուք ինքնին գիտէք՝ զի բազդի բարւոյ հանդիպել արանց եղեանաւորաց և զլիսպարտից՝ 'ի նախանձ սրտմտութեան բրդէ զլաւաբարոյսն, և յոգունց իսկ պատճառս սայ վտարանջելոյ՝ մանաւանդ անհանդուրժիցն բարուք՝ շուղափութիցն և հրատից իբրև զԹիրսենիքլի, որ առ լըումն իւրոց հաճոյից՝ ոչինչ

խղճայ զաշխարհ ամենայն յաչս դնել. և զուցէ զոր ընդ հայց անկեալ խնդրէ սա այժմ աղաչանօք և պայմանաւ արդէն վճարելոյ զտարևոր վարձսն յընդերկարիլ իրացն գուն դնիցէ բունի զնոյն յափշտակել:

Իբրև հասու եղև Տէրութիւնն այսոցիկ հանձարեղ խորհրդածութեանց, զիջաւ սալ Թիրսենիքլայ զՎառնովա. բայց չկամեցեալ ևս պայմանադրուծ երևել առ Բազվանթ Օղլու՝ խոստանայր զյեակարս կալուածոյն վեց ամսովք յառաջ քան զլըումն տարեկանին յղել առ Թիրսենիքլի. իսկ առ տիրանայոյ այնմ՝ պէտքին, ասէ, Թիրսենիքլայ զէն 'ի գործ առնել ընդդէմ Բազվանթ Օղլոյ: Եւ Վանուկ առ գտանելոյ առ իթս իմն զժուութեան ընդ մէջ երկոցուն նոցա՝ վարձեաց զմի այլ կալուած 'ի վիճակին Վառնովայ, կարծիս կալեալ՝ թէ արք Բազվանթ Օղլոյ յիլ և 'ի մուտ իւրեանց ընդ այն՝ յարուսցին ինչ շշուկ ընդ սպասաւորացն Թիրսենիքլայ: Եւ ստոյգ իսկ 'ի գերև չելին կարծիքն: Զի յետ դարձին Վանուկայ 'ի Ռուսջուզ, մինչ չև անցեալ էին աւուրք երկրումնայ՝



ԿՈՄՍՈՒԹԵԱՆ ԵՇԱՆԱԿԻ ԼՈՌԻՍՍԻԷԼԻԲՈՎԻ
(ԿԷ՝ ԷՂ 3):
(Պատկերս նկարեցաւ. և փորագրեցաւ. յատուկ մեր հանդիսի համար)

արքն Բազվանթ Օղլոյ սպանին զմի ոմն 'ի պաշտօնէից Թիրսենիքլայ Սապաշի ձայնեալ, այս է կողմնապետ: Եւ Թիրսենիքլայ զայրացեալ ընդ այն առաքեաց զօրք 'ի Վառնովա զՄուստաֆա Պայրաքտար: Ի գիմի հարան նմա թշնամիք զճանապարհայն. բայց վանեալ 'ի նմանէ՝ անկան փախստեայ 'ի քաղաք անդր. և 'ի պնդել Պայրաքտարայ զհաւ նոցա՝ ամբացան 'ի կողմն մի քաղաքին. այլ ոչ բաւեալ կալ յընդերկար պաշարման՝ անձնատուր եղին նմա յետ աւուրց տասանց և հնգից:

Յառնուլ Թիրսենիքլայ զՎառնովա և ևս մեծացաւ ճոխացաւ նա ոչ միայն արդեամբք կալու-

ածոյն, այլ և գտելովքն 'ի նմա գանձուք Բազմանթ Օղլոյ, յորոց և շատ ինչ բաշխեաց իւրոց զօրացն:

Ահրահացուք սահմանակից գաւառաց զմաւ ածեալ՝ թէ չմարթին այնուհետև ինքնօրէն աներկեան ազատութեամբ իշխանակալիլ յասէ երեսացն թիրսնիքլեայ՝ որում հնար էր զիւրակի ևս յաջողութեամբ նուաձել զքաղաքս նոցա, օգտակարագոյն գատեցին մտանել ինքնակամ ընդ հնազանդութեամբ՝ ծանուցեալ զնա Առաջնորդ իւրեանց և Պաշտպան, որպէս զի գէթ յապահովի զիւրեանցն վարել ունիցեն զպաշտօն: Եւ քանզի սակս կարի յոյժ յառաջէմ կերպարանացն թիրսնիքլեայ և բարուցն դժնութեան չվտասհեր ոք անաս անկասկած խօսել ինչ ընդ նմա՝ առաքեցին կոչեցին զՄանուկ առ 'ի հաստել միջնորդութեամբ նորա զմիաբանութիւնն պատշաճ պայմանօք զի գիտէին՝ եթէ մեծ է պատիւ առնն առաջ թիրսնիքլեայ, առնէ զինչ և կամի, և բան մի նորա չանկանի 'ի գեաին: Երբև չօքաւ առ նա Մանուկ, յորդորագոյն ևս հաստատեցան 'ի խորհուրդն՝ խելամտեալք 'ի հանձարեղ նորա բանիցն. և եկեալ ապա ամենեցուն նոցա առ թիրսնիքլե՝ արկին նմա կամաւ զանձինս 'ի հնազանդութիւն. և նա խիլայեաց զնոսա միով միով սամուրենեաւ, և առն առն պարզեաց զմի մի երիվար:

Եւս կապակցութիւն ուխտի քաղաքապատհ ոս-

տիկանաց՝ առաւելովքն հզօրացոյց զթիրսնիքլե. զի էին նոցա իւրաքանչիւր գունդք սպառազինաց հարիւրաւորք և հազարաւորք զիւրապատրաստք այնուհետև առ ամենայն ակնարկութիւնս նորա. եւ զի կամք էին թիրսնիքլեայ բազմացուցանել զթիւ զօրականին մինչ ցերիս բիւրս կամ ցջորս, յաւել կացուցանել յիւրայոցն առանձին առանձին վերակացուս՝ մի մի քաղաքացն զօրս հանեալ էր 'ի ձեռաց Բազմանթ Օղլոյ, և չունելով ինչ խեթ երկիւղի 'ի նոցանէ՝ կալաւ ընդ իւրով իշխանութեամբ միայն զքաղաքսն Ռուսջուզ, Պոնովա, Շելթով՝ հանդերձ պարագայ շինիւքն:

Հնար էր ապաքէն ժողովրդակայ այսմ տեսութեան տեւել բաւել 'ի դարս՝ եթէ և այլք յետ թիրսնիքլեայ ստակ լինէին պահել անքակ 'ի միաբանութեան զայնչափ բազմութիւն և եթէ ոչ Տէրութիւնն նկրտէր 'ի կործանումն այնօրիկ ննագաւ կամ բռնութեամբ:

Յետ այսօրիկ Տէրութիւնն 'ի շնորհս երեսաց թիրսնիքլեայ զմի ոմն Այսրն անուն՝ որ ընդ նորա հովանաւորութեամբն կայր՝ կարգեաց հրամանատար 'ի բերդին Աէրկիօվայ՝ տուեալ նմա բղեշնութիւն երկտուղեան, ըստ որում օրէն էր՝ որոց 'ի նոյն պաշտօն վիճակէին՝ զայս ունել սաստիճան պատուոյ:

(Շարունակեաց):

4. ՊՕԼՍՈՅ ՀԱՅՆ

Ե.

ԹՇՈՒԱՌ պանդուխտն երբ յուսահատ,
Կերթ հայրենեացն կ'առնու մի լուր,
Ալբէ. «չեռուն, մի հարազատ
Երկիր ունիմ, իմն խանձարուր»:
Եւ այն հողին քաղցր յիշատակ,
Ուր մանկական սէրն զգաց յոյժ,
Խեղճ պանդխտին գայ շարունակ
Լքեալ հողոյն տալ մէկ քիչ ոյժ:
Բայց մշտապէս ցաւոցս ատեն,
Ի՞նչ մրմնջէ իմ լուռ բերան:
Ո՞ր երկրի յուշք զիս սփոփեն,
Պիտեմ մի երգ հայրենական:

Ի՞նչպէս Հայ եմ, երբ մէկ ձեզուն
Ձէ՛ ծածկած զիս յաշխարհն հայուն:

Բ.

Ենարգաւանդ հողի վրայ, հէք,
Ձգել են զիս ծիւղ ազազուն
Ենարգ պատուաստ որ չէ երբէր
Ճանչած իւր հին տոհմական բուն:
Ձեմ կարող աստ փթթիլ ազատ,
Վանդի տարերքն ինձ անյարմար,

Ձէն տածեր զիս որ տամ արմատ,
Օրբեմ ծաղկիմ ժիր ու դալար:
Ի՞նչպէս խամբեալ, խեղճ ու վրտիտ,
Յինէն պրտուղ կրկնդրէք դուք:
Ի՞նչպէս իմ շուրջս տամ ես ժրպիտ,
Ի՞նչպէս մեծնամ, տարածեմ շուք:

Առուինչն անգամ, բոյս զիւրատուն,
Ալ ժառանգէ մի որմ պատուուն:

Պ.

Ե՛հ, ի՞նչ ամենայն է չարաչար,
Երբ մարդ բռնի թշնամոյն մօտ
Պէտք է ապրի, և անգաղար
Շնչէ նորա օգ ժանտահոտ:
Երբէք աչերս ուղղած 'ի վեր,
Երկնից երանգն չեմ գիտած ես,
Եւ վոսպորայ վազուկ շուրեր
Ձէն ցուցած բնու իմ երես:
Օտարի հացն չըպահեր կուշտ,
Օ՛ր չէ՛ օրհնեալ հողի պարգև,
Եւ երկնից լոյսն քիչ է անշուշտ
Ուր կ'անցնի կեանքն իմ անարև:

Եյն վայրն որ չէ իմ հայրերուն,
Ձրկայ խնդում, չըկայ դարուն:

Գ.

Կ'ատեմ՝ երկիրս ուր մինչև ցարդ
 Կը հնչէ լոկ մի բառ. «Ոճիր»:
 Կ'ատեմ՝ երկիրս ուր ամեն մարդ
 Խարխուլ գահին կայ ծնրադիր:
 Խակ յԱրեմուտս, լուսոյ հեղեղ,
 Թափառեցայ ես շատ ատեն,
 Լա ըզգացի որ և այն տեղ
 Հայրենազերծ մարդիկն կ'ատեն:
 Բսին. «Ո՛ւր է երկիրդ, որո՞ն
 «Օճիրն ՚ի ձեռին ես պահպան.
 «Ո՞ր օր ելիր պաշտպանելու
 «Բոյ հարց երկիրն ու գերեզման»:

Բսի. «յաշխարհս կայ մէկ անկիւն,
 «Ո՛ւր թող աան ինձ թափել արիւն»:

Ե.

Վ տարանդի, վտարանդի,
 Այլոց բազդին դու անարժան,
 Վասն հայրենեաց սիրագ անօթի,
 Չունի՛ իրեն մի վայր սեղան:
 Մինչդեռ անարգ միջատն նաև,
 Իւր ապաստան բոյնն ունի մութ,
 Չըկայ քեզի, երկնից ներքև,
 Մի քար որ բարձ ընես գլխուդ:
 Մի՛ հառաչեր դու ընդունայն.
 Ոչ որ կ'ուզէ քեզ որդեգիր:
 Երբ մեռանիս յայնժամ միայն
 Կրնաս ըսել. «Գլտի երկիր»:

Վ տարանդի, անտէր հայուն,
 Այն հողն իսկ չէ հանգստեան տուն:

Կ. Պոլս. Մայիս 1880:

Տէրան-Աշո:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ԳՈՅԱՆԱԼՆ ԱՆԳՂԻՈՅ ՄԷՋ:

Մեր հրատարակութեան նախընթաց տետրին
 մէջ, համառօտապէս, ցոյց տուինք թէ ինչպէս
 կատարվում է Անգղիայում քաղաքական փոփո-
 խութիւնն. այժմ աւելորդ չենք համարում նկա-
 րագրել՝ թէ ինչպէս է կազմվում կամ լաւ ևս
 ասել գոյանում այն տեղ քաղաքական կարծիքն և
 գլխաւորապէս՝ որ տեղ է կենտրոնանում նա:

Մեծ սխալ կը լինի կարծել՝ թէ անգղիական
 քաղաքական կարծիքն գոյանում է և կենտրոնա-
 նում պարլամենտում: Այն տեղ անտարակոյս
 արվում է նորան եղանակ, այն տեղ՝ քաղաքական
 միտքը, որ տիրում է երկրի մէջ, կամ՝ լաւ ևս
 ասել՝ հասարակութեան ամենաներգործող դասին
 մէջ, մարմնանում է օրէնքի և մացվում է կեանքի
 մէջ: Բայց ստեղծվում, կազմվում և կատարելա-
 գործվում է նա ոչ այն տեղ: Բայց ՚ի բազմաթիւ
 ամենակարելի ժողովների, քաղաքական ընկերու-
 թիւնների, և ժողովների բուն իսկ Անգոնի մէջ,
 կան այն տեղ և այլ շատ հիմնարկութիւններ, որք
 ծառայում են այդ նպատակի համար: Անգղիական
 ժողովուրդն վաղուց ապրում է քաղաքական կեան-
 քով. այնպիսի կենտրոնի մէջ, որպիսի է Անգոն
 քաղաքն, իւրաքանչիւր արհեստաւորի, մշակի վե-
 րայ, որ ունի կարողութիւն գոնէ շաբաթն մէկ
 անգամ գնել լրագիր, համարեա՛ թէ ստիպողական
 հարկ կայ իմանալ և հասկանալ քաղաքական օրի
 պատմութիւնը, և իւրաքանչիւր խնդրի վերայ ու-
 նենալ իւր կարծիքը: Այս հասկանալի է թէ
 աւելի վեր հասարակութեան՝ որպէս, զորօրինակ՝
 քլերքերի, փոքր մասնաազիրների և վաճառական-
 ների համար, արդէն հարկաւորութիւն է ծագում

ունենալ և ամբիօնք, որոց վերայից կարելի լինի
 նոցա բացատրել իւրեանց կարծիքները: Նոցա
 միջում միշտ գտանվում են առանձին սիրողք
 քաղաքականութեան, որոց համար խօսել և վիճել
 նորա՝ վերայ՝ գոնէ շաբաթը մէկ անգամ, լինում
 է այնպիսի հանապազօրեայ կարիք, որպէս ուրիշ-
 ների համար՝ է իւրաքանչիւր կիրակէ եկեղեցի
 գնալ և քարոզ լսել:

Ահա մի օրինակ այդպիսի ժողովների:
 Ամենից աւելի կենդանութեան և շարժողութեան
 մէջ զանուած մէկ փողոցում, որ կենտրոն է լաւ-
 գրական կեանքի՝ Fleet street, կայ մի փոքրիկ գի-
 նեաւուն Գինսոն անուն մի մարդու, որ յայտնի է
 նոյնպէս ընդ անուամբս Temple: Նորա գրան ճա-
 կատի վերայ կայ հետեւեալ վերնագիրս՝ „Discussion
 Forum“, այսինքն է՝ „տեղի վիճաբանութեան“:
 Իւրաքանչիւր երեկոյ, սկսեալ 9 ժամից, այն տեղ
 կարելի է տեսնել հետեւեալ պատկերը: Բաւական
 մեծ սենեկում, նստարաններով և սեղաններով՝
 պատի մօտ շարուած, և ամենամեծ նախագահա-
 կան աթոռով՝ մէկ անկիւնում դրուած, հասարա-
 կութիւնն ժողովվում է վիճաբանութեան համար:
 Աթոռի վերայ բազմած տեսանում ենք առանձին
 վստմութեամբ մի բարձրահասակ ալեւոր ծերունի,
 երկայն ձեւմակ մօրուքով: Սեղանների առաջև
 նստած կան ժողովականք, որք ծխում են երկայն
 ծխարաններից, խմում են, ուտում են, և միւսնոյն
 ժամանակ՝ լսում են ատենաբաններին: Ժողովը
 բացում է նախագահն: Նշանակեալ ժամում, նա
 ոտքի է կանգնում, աչքից է անցնում հանդիսա-
 կանքը, և նման իսկական տէրութեանական մարդոյ՝

սխանում է իւր ճառը: Երժէ նայել նորա վերայ քանի մի րոպէ, համոզուելու համար՝ թէ նա քօնսէրվաթօր է: Այլապէս այդ կարող չէ ևս լինել: Այդ Forumը 200 տարիից աւելի է՝ որ կայ այդ տեղ. արդէն քանի տարի է, որ նոյն իսկ ծերունին ամենայն երեկոյ բաց է անում ժողովը՝ իհարկէ վարձով. նորա աթոռը անտարակոյս Լոլի-սաբէթ թագուհւոյ ժամանակից մնացած է, ըստ որում նա բաւական մաշուած է և ծեծուած: Ատենաբանի բոլոր ձևերը իսկ և իսկ պարլամէնտական են. նորա ճառն փոքր առ փոքր կենդանութիւն է ստանում, նորա ձայնը, մարմնոյ շարժ-

այսպիսի բան պատահելու լինի, ժողովականաց մեծամասնութիւնը ընկնում է պատճառ տուողի վերայ գոչումով order, order: Նորա, որք գիտնն պարլամէնտական սովորութիւնքն, իւրեանց հակառակորդաց ճառասացութեան ժամանակ առհասարակ ձևանում են իբր թէ քնած են՝ ընդունելով բոլորովին անշնորհ ձևեր. «ես այնքան բեղարեցայ քո ճառից, որ պիտի քնեմ» իբր թէ ասում է նա: Նսխադասին պատասխանում է առհասարակ ազատականը, որ վերկենալով իւր տեղից, սկսում է իւր բանը արդէն աւելի մեղմ և ծանր: Իւրաքանչիւր կիւրակէ, երեկոներին, տէրութիւն-



ՏԱԹԵՒԱՅ ՎԱՆՔԻ Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ Ի ՍԻՆԵԱՅ ԳԱՒԱՌԻ:
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

մունքն, բնաւին չեն զանազանվում տաքացած լորդերի ձևերից: Ժողովականք նոյնպէս անտարբեր չեն մնում ատենաբանին. հինգ րոպէից յետոյ կարելի է արդէն ասել՝ թէ ո՞վ է համարում նորան, և ո՞վ ոչ: Առաջինքն՝ ատենաբանի ճառի իւրաքանչիւր սաստիկ տեղում, գոչում են hear, hear (այն է՝ լսեցէք), խփում են իւրեանց գաւազանները գետին, սեղաններին, աթոռներին. իսկ երկրորդքն, այն է՝ հակառակորդքն, պատասխանում են ծիծաղով, գոչումով՝ No կամ Oh, կամ առհասարակ՝ ծաղրածութիւնով: Ատենաբանի ճառն շատ սակաւ պատահում է՝ որ ընդհատուի որից և իցէ, և եթէ

նական այս կամ այն խնդրի վերայ վիճարանութիւն կարելի է լսել նաև միւս բազմաթիւ discussion rooms-երի մէջ, իսկ առաւօտներին՝ մինչև անգամ հրապարակներում, որոց համար հարկաւոր չէ խնդրել որից և իցէ թոյլտուութիւն, բաց ՚ի տեղի տիրոջից: Այս տեղ լինում է արդէն բոլորովին հասարակ ժողովուրդ, որ շատ անգամ չունի համարեա թէ առանձին կիւրակէական հանդերձ: Այս տեղ բէմ է կրանում արուեստաւորների այն դէմօկրատիայն, որ դառնում է իսկական պաշտպան ազդիկարական նախարարութեան: Ահա այսպէս է գոյանում հասարակական քաղաքական կարծիքն Ենդդիոյ մէջ:

ՆԱՀԱՏԱԿՔ ԳԻՏՈՒԹԵԱՆ *

Գ. Լ. Ա.

Հերոս+ աշխարհաբան և նահապետ+ կրթական յարաբարեման-իւնան:

ՄԱՆՈՒԹԵԱՆ օրերից ցուցանում են մեզ աշխարհակալների վերայ, որոց պարտական են ժողովուրդք պատերազմի բոլոր զարհուրանքներով, և մի և նոյն ժամանակ՝ ոչինչ չեն խօսում համեստ մշակների վերայ, որք ապահովացնում են հասարակութեանց կարելիութիւնը օգտիլ նիւթական և հոգեկան բարիքներով:

Մենք լաւ գիտենք՝ թէ կսերկսոս այրեց Աթենքը, թէ Պոմպէոս և կեսար թափեցին արիւնի ծովեր Փարսաղի (Փարսաթ) դաշտերի վերայ. բայց մեզ համարեա ոչինչ յայտնի չէ Լյվիլիտէսի կամ Աբբի-մէդի կենաց մասին, որոց գիւտերն դեռ մինչև ցայժմ գտնում են այնքան օգտակար յարմարութիւնք հանապազօրեայ կեանքի մէջ:

Իայց մեր քաղաքային կրթութեամբ, մենք պարտական ենք ոչ զօրպետներին և աշխարհակալներին, այլ այդ իսկ երևելի մշակներին բոլոր աշխարհի և ամբողջ ժամանակի: Նորա թողին մեզ ՚ի ժառանգութիւն այդի, որ մշակուեցաւ ՚ի նոցանէ շատ դարերի ընթացքում, մենք ժողովում ենք պտուղներ, որոց սերմերն առաջին անգամ ցանուեցան նոցանից:

Պիտոր անունների միջեց, որոց նուիրուած է հասարակական ուշադրութիւնն, ասում է Դօֆ-րուա-Սէնթ-Նէր, չկայ և, ճշմարիտ է, կարող չէ լինել աւելի փառաւոր, որպէս գիտութեան երևելի մեծագործների անուններն: Արգարև, միթէ չունին իրաւունք մեր երախտագիտութեան այդ հերոսքն աշխատութեան, այդ ուսումնականներն, այդ խուզարկութն, հեղինակքն, փիլիսոփայքն, որք կտակեցին մեզ գիտութեան զանձեր:

Որքան կրթական պողաբեր ցուցմունք, որքան թանկագին օրինակներ գտնում ենք մենք նոցա կենաց պատմութեան մէջ, նոցա պատերազմին մէջ՝ անյաջողութեան հետ, նոցա աշխատութեանց մէջ:

Եթէ մենք ցանկանում ենք իմանալ՝ թէ որպէս են կատարվում մեծ գործերն, տեսնենք՝ որպէս են գործում և աշխատում այդ մարդիկը, նայենք նոցա ցոյց տուած գործունութեան և անընկճելիութեան վերայ...

Իսկնք Նիւտոնին և նա մեզ ասելու է՝ թէ նա իւր գիւտերը արաւ՝ «միշտ նոցա վերայ մտածելով»: Իւլի Ֆիլօն բացառանչելու է՝ «հանձարն է համբերութիւն»: Ամենքն կրկնելու են մի և նոյնն: Աշխատանք և պնդութիւն—այս է նոցա կանոնն—դէվիզն:

«Ժամանակն և համբերութիւնն դարձնում են թուրթի տերևներն ապրուշումի», ասում է հնդկական առածն: Նիւտոն տասնևհինգ անգամ փոխեց փոփոխեց իւր Վրոնիկոնը, մինչև գտաւ նորան բաւականացուցիչ: Միքէլ-Անճէլօ անդադար աշխատում էր, շուտ շուտ ուտում էր և մինչև անգամ երբեմն վեր էր կենում զիշերներն՝ աշխատելու համար: Քառասուն ամաց ընթացքում Իւլի Ֆիլօն ամենայն օր անցընում էր իւր գրասեղանի առջև՝ հինգ ժամ առաւօտուն և հինգ ժամ երեկոյին: Մօստէպէօ, խօսելով իւր աշխատութեանց մինի վերայ, ասաց իւր բարեկամներից մինին՝ «Կուք կը կարգաք այս գիրքը քանի մի ժամի մէջ, բայց հաւատացնում եմ ձեզ, թէ աշխատութիւնն, որ նա ինձ նստեց, ծածկեց իմ գլուխս սպիտակ մազերով»:



ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՄԵԱՆ
Լուսնորդ վանայ:
(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

* Գաստոն Տիսսանդիէ դաղդեացոյ աշխատութիւնից քաղուածօրէն: Հրատ.

«Ով պնդում է՝ թէ կարելի է անել մի բան առանց աշխատութեան և հոգացողութեան, ասաց Ֆրանկլին, — նա մոլորեցուցիչ է»:

Որպիսի և լինի նպատակն, որին հասանելու աշխատում է մարդն, նա իւրեան բոլորովին չպիտի նուիրէ աշխատութեան. նորան հարկաւոր է միայն յաղթել դժուարութիւնքը, որովհետեւ ամենատեսակ արգելքներ միշտ փակում են նորա ճանապարհը: Ինչ և չձեռնարկէ նա, նորան հարկաւոր է պատերազմիլ յաջողութեան համար, յաղթութեան համար՝ կենսական դաշտի պատերազմի մէջ:

Եւ որտեղ պատերազմ կայ, այն տեղ և վտանգ կայ: Եթէ աներկիւղ ճանապարհորդն կըզիսէ նոր երկիրներ նուաճելու և ծովերը անցնելով, ամբողջ աշխարհի մասները, կսկսի լայնացնել աշխարհագրութեան գիծը, ուսանիլ հեռաւոր տեղերի բոյսերը, նորա առաջը կելանեն անհամար վտանգներ: Ով կհանոսի վերայ՝ ալեկոծութիւնն՝ նորա ճանապարհը կըկապէ, ցամաքի վերայ մարդիկ և անասունք կընկնեն նորա վերայ, խոնջութիւնն և սովն կը լինին նորան ընկեր: Նա պարտաւոր կը լինի պատերազմիլ ամենատեսակ դժուարութեանց հետ:

Ոչ սակաւ բնագէտներ, սկսած Մեծն Պլինիոսից և վերջացնելով Վիկտոր Դակմոնով, ընկան նահատակ կամեցողութեան խել բնութիւնից մի նոր որպիսի և իցէ ճշմարտութիւն: Պլինիոսի մահն, այդ մի մասնով յաւիտենական պատմութիւն է մարդոյ, որ խորակվում է տարրի զօրութեան տակ: Նոյնպիսի է և Դակմոնի մահն. նա վախճանեցաւ ՚ի Բոմբէյ զկնի զարհուրելի չարչարանաց, որք զարմանք են պատճառում մեզ: Հանդարտ անասանութիւնն չը թողուց նորան նաև մահուան վերջին րոպէում: Նա գտաւ իւր մէջ նաև զօրութիւն գրելու նամակ առ իւր սիրեցեալ եղբայրն. «Իմ վախճանս, եթէ միայն այդ վախճան է, հանդարտ է և անդորր: Եթէ զու լինէիր այս տեղ, նստած ահա մօտիս, իմ անկողնիս վերայ, հօրս և Ֆրէդէրիկի հետ, հոգիս կը փշուէր և մահուան մօտենալուն ես չէի նայելու այսպիսի խոնարհութեամբ ճակատագրիս և հանդարտութեամբ: Միտիթարուէր, միտիթարէ մեր հօրը. միտիթարեցէք մէկ զմէկդ, սիրելեքդ իմ: Բայց ես բոլորովին թուլացած եմ զօրութիւնից գրելու մի բան: Դամ է սակ ձեզ՝ մնաք բարեաւ. Մնաք բարեաւ: Ո՛հ, որպէս սիրում էր ձեզ ողորմելին ձեր Վիկտոր: Մնաք բարեաւ ցյաւխտեան»:

Մահն զբաւ վերջ Դակմոնի վշտին: Աջքերն այդ ճանապարհորդի, որին կարելի է անուանել նահատակ պարտականութեան, փակուեցան յաւիտեան: Պիտութեան երևելի մշակների կեանքն պիտոյ է

ղարթուցանէ մեր մէջ ձգտողութիւն առ աշխատութիւն, ցուցանելով մեզ օրինակներ թախանձութեան, անպակաս զօրութեան, որ է գաղանիք յաջողութեան, երբեմն գաղանիք հանձարի. ամեն պարագաներում աշխատութիւնն անպակաս լի աղբիւր է զօրութեան և միտիթարութեան:

«Ուսումնասիրելով մէկ առարկայ, ասաց Օգիլատ Թիեռ, ապրում ես դժուար ժամանակներ, առանց զգալու նոցա ծանրութիւնը. ինքդ դառնում ես տէր քո բաղդիդ, ուղղելով կեանքդ պատուաւոր նպատակի: Ելնելով կոյր և չարչարուելով համարեա անդադար առանց որ և իցէ յուսոյ լուանալու, ես այդ կարող եմ ստել ըստ իրաւանց, և զիս կարող չին կասկածել ստախօսութեան մէջ, թէ կայ լուազոյն մի բան, քան նիւթական զուարճութիւնքն, քան հարստութիւնը, քան ինքն առողջութիւնը, այդ սէրն է առ գիտութիւն»:

Մի այլ մտածողութիւն ևս պիտոյ է պաշտպանէ մեզ այս բանում: Պատճառների մէջ, որք ծնուցանում են գիտութեան նահատակներին, կան այնպիսիք, որք արդէն անհետացան նոր հասարակութեան մէջ. նոքա առնում են սկիզբ ոչ տարրի մէջ, այլ մարդոյ մէջ, նորա նախապաշարմանց մէջ, նորա տգիտութեան մէջ: Հալածանքներն, որք ունեցան այնքան զոհեր անցեալում, դադարեցան այժմ սպառնալ նորան, որ մոցնում է նոր ինչ. նոքա այժմ ոչ զբին յայտնի չեն: Մինք կարող ենք տեսնել զիս Ելվինգստոններ, որք տկարանում են նուազելով հիւանդութիւններից իւրեանց հետազօտութեանց թաարմում, բայց աւելի չենք տեսնելու Վրիստափոր Արմօսներ, որք կապվում են շղթաների մէջ ստեղծութեամբ և նենգութեամբ: Ենկարելի է միտ չբերել զհետեւալ Բէրնարդէն դէ Սէն-Փիեռի խօսքերը. «մեր պպիւրը ապրում էին երկաթեայ դարում, դարն ոսկեղէն մեր առջևում է»:

Երկու դար սորանից առաջ Ռիքէ, որ փորեց Պարզեպում հարաւային ջրանցքը, որ միացուց Ետրանտեան ովկիանոսն Միջերկրական ծովի հետ, մեռաւ աղքատութեան մէջ:

Տեսարանն մարդու, որ մեռանում է աղքատութեան մէջ այն ժամանակ, երբ նա հարստացուց երկիրը, շատ ցաւալի է. բայց մեր դարում այսպիսի բան աւելի չէ պատահում: Ֆերդինանդ Ախսէփաներ, որոց կառուցանող հանձարին աշխարհս պարտական է մեծամեծ գործերով, Պարվիներ, որք բացում են խելքի համար նոր գաղափարներ, չեն թշուառանում. տասնեկիններորդ դարում նոցա չեն հալածում. ընտրեալ մարդիկն, աշխատողքն, այսպէս, ՚ի փառս իւրեանց հայրենեաց և յօգուս



ՎԱՃԱՌԱՆՈՑ Ի ՍԱՄԱՐԻԱՆԻ:

ջարերում էք նորան, պատուելով Ձեր այցելու-
թեամբ այս Ձեր անունով «Մասուլիյէ» (Երջան-
կութիւն) կոչուած վարժարանն, մանրամասնօրէն
քննելով այն առարկաներն, որք աւանդվում են,
նշանակելով աշակերտաց յառաջադիմութիւնքը, և
վարձատրելով նոցա այլ և այլ պարգևներով և

այն բարեաց համար, որ կատարած էք Վուք մեզ
համար: Բարեմտութեամբ ենք Ձեզ երջանկութիւն
և բարօրութիւն»:

Նոյն Պարսկերէն լրագրից իմանում ենք, որ
Նորին Բարձրութիւնն՝ Պարսկերէն, Անգղիարէն
և Հայերէն լեզուների վարժապետներին թանկագին



ՀԱՋՐԱԹԸ ՎԱԼԱՅ ԶԻԼԱ-ՍՈԼՏԱՆ
ՍՈԼՏԱՆ ՄԵՍՈՒԳ ՄԻՐՅԱ

Երէն որդին Հանին Պարսից

ЗЕЛЛА-СОЛТАНЪ СОЛТАНЪ-МАСУДЪ МИРЗА | ZELLA-SOLTAN SOLTAN-MASSOUD MIRZA
Старшинъ сына Е. В. Шаха Персидскаго. | Le fils aîné du S. M. le Schah de Perse.

(Պարսկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

մրցանակներով: Այն օրից, որ մենք գտանվում
ենք Ձեր թեմակութեան ներքոյ՝ պայծառապէս
տեսանում ենք՝ թէ մեր նոր սերունդն զարմանալի
յառաջադիմութիւններ է անում գիտութեանց և
լեզուաց մէջ: Վարդը չենք ըստ բաւականին շնոր-
հակալութիւն յայտնել Ձեր Բարձրութեան բոլոր

շարք է նուիրել ցոյց տալու համար՝ թէ ինքն
մեծապէս դնահատում է նոցա ծառայութիւնը:

Մեր ստացած մասնաւոր տեղեկութիւնքն ևս
ապացուցանում են՝ թէ Պարսկաստանի ներկայ
լուսաւորեալ և Եւրոպական զաղափարներ ունե-
ցող արքայադնեաց մէջ Օ.էլլա-Սօլթանն առաջին

տեղն ունի բռնած այն տեղ: Նորա կառավարու-
թեան ներքոյ գտնուած Սպահանի նահանգն, որպէս
տեղանաւոր անգամ պատմուած են, երջանկութեան
և բարօրութեան մէջ է գտնուում, և ժողովուրդն
վայելիլով հանգստութիւն ամենայն կողմից՝ հան-
գարա պարագում է իւր գործով: Եթէ Պարսկա-
ստանի միւս նահանգներն ևս ունենային այսպիսի
արդար և լուսաւորեալ կառավարիչք, անտարակոյս

այդ տէրութիւնը մինչև ցայժմ մեծ յառաջակի-
մութիւն արած պիտի լինէր, մանաւանդ նայելով
Պ. հ. Շահին Ներսիսի վերագտնուելն յետոյ
ունեցած ջանքին վերանորոգութիւնը մտցնելու:
Մերք մեզ բաղաւոր ենք համարում, որ կար-
ղանում ենք այսօր զարդարել մեր հանդիսի էջերն
Նորին Բարձրութեան գեղեցիկ կենդանագրով:



Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆՈՐԱՏԻՊ ՍԱՏԵԱՆՔ

Ն.

«Պոռոյ մը Պօլոյ թաղերու մէջ»:
Գործ Պարոնեանի. Կ. Պօլիս, 1880:

ՎԵՐՈՅԻՇ ԵՍԷՄ մատենան Կ. Պօլոյ թա-
ղերի ճիշդ նկարագրութիւնն է: Մեր Կ. Պօլոյ
պատուելի թղթակիցն ուղարկելով մեզ այդ գիրքը,
գրում է իւր նամակին մէջ. «Պարզացէք, ասում
է նա, շատ կը խնդաք և շատ ալ կը ցաւիք. պիտի
տեսնէք՝ թէ Պօլոյ Հայն տակաւին կրթութեան
շատ պէտք ունի և շատ յետ մնացած է զբացի
ազգերէն, նա մանաւանդ Յունաց հետ բաղաւոր-
մամբ»:

Մեր թղթակցի խօսքերը ճշմարտացնելու համար
բաւական ենք համարում ՚ի մէջ բերել այս տեղ
հետեւեալ խօսակցութիւնը երկու Պատար-Պիւղցի
Հայ կանանց: Լսեցէք.

Իգական սեռն քննարկ տեղ բամբասանք կը գործածէ և
առանց ջորի: Իրարու ետեւ գերար գետինը կանցունեն, իսկ
երբ դէմ առ դէմ գան՝ զերար երկինք կը բարձրացունեն:

Եթէ գործ չունիս՝ եկուր սա պատուհանին առջև քիչ մը
կայնիք ու մտիկ ընենք:

- Տիկին քաթիկ, օրիորդ Աղանին տեսար երէկ:
- Բարով խերով չտեսնէի, ադ որչափ ձերմակ քոված
էր... գլուխն ալիւրի պարկին մէջ է խօթեր ինչ է ըրեր:
- Անանկ ալ շրջագետ մը հագած էր որ չորս կողմը
բաց էր:

- Թերեւս քոմաչը պակասած է:
- Ղոնէ ոտները պզտիկ ըլլային:
- Այսու ամենայնիւ ստատանան շատ գեղեցիկ է:
- Ղեղեցկութիւնն ալ ո՞ր է ագոր... երեսը բնաւ տե-
սնել չեմ ուզեր, կրողը տեսնէ:

Ահա օրիորդ Աղանին դուռը կը զարնէ այն սան ուր այս
խօսակցութիւնը կը ըլլայ:

- Բարի եկաք, օրիորդ Աղանի, սա ո՞ր էք, հիմա տիկին
քաթիկին հետ քեզի համար կը խօսէի և կըսէի թէ օրիորդ
Աղանին մեզի բոլորովին մոռցաւ:

- Ես ձեզի կը մոռնամ, ամեն օր գալ կուզեմ բայց տան
գործերը թող չեն տար. (Բիւր-սի) կրողը տանի երկուքնիդ ալ:

- Օրիորդ Աղանի, իրաւ որ ձեզի տեսնամ նէ քոյրս տե-
սածի պէս կը ըլլամ. (Բիւր-սի) Սատանան տեսնէ երեսը. (Քարչը)
Օրիորդ Աղանի, ամեն օր տեսնամ նէ քեզի չեմ վշտանար:

- Շնորհակալ եմ. (Բիւր-սի) խնդ ըլլալու էի որ խօսքե-
րուն հաւատայի:

- Այդ շրջագետիդ ձեռն ուսկից աւիր Աղանի:

- Հաւանեցա՞ք:

- Շատ հաւանեցայ, օրիորդ Աղանի, հաս մ'ալ ես պիտի
չենեմ անանկ:

- Հանրազեղու բան մը չէ կարծեմ:

- Ինչ կրես, օրիորդ Աղանի, շատ ձեւաւոր էր: Օրիորդ
Աղանի, խահվէ կուզէք, անուշ կուզէք, պանուշ կուզէք,
կերակուր կուզէք, գինի՞ կուզէք, սիկարա՞ կուզէք, կալաչեմ,
օրիորդ Աղանի, առանց քաշվելու զրուցեցէք:

- Բան մ'ալ չեմ ուզեր ձեր ողջութիւնը կուզեմ:

- Անուշ մը հրամայէք:

- Շատ լաւ կընդունիմ:

- Քեզի բան մը պիտի հարցնեմ, բայց շետակ պիտի
զրուցես, վասն զի շաբաթ մը կայ որ տուններուս մէջ կուրը
պակաս չէ. տիկին Թերեզային առջևի տկուայները շինծու
չեն մի՞:

- Ետեւիններն ալ շինծու են:

- Ողջ ըլլաս, ես կըսեմ նէ ինծի չեն հաւատար... անուշ
մ'ալ կը հրամայէք օրիորդ Աղանի:

- Չէ, շնորհակալ եմ:

- Բան մ'ալ պիտի հարցունեմ, բայց կը քաշվեմ կոր...:

- Մի քաշվէք:

- Տիկին Մարթային գիրութիւնը բնական է թէ բամպակ
թխմած է:

- Տիկին Անթառամին լսածին նայիս նէ բամպակ է, իսկ
տիկին Շուշանին խօսքին հաւատա՞ք նէ բարդ կը թխմէ եղեր:

- Շնորհակալ եմ, օրիորդ Աղանի, մեզի մեծ հոգէ մը
ազատեցիր, չդիտես քանի մը օրէ ի վեր որչափ անհանգիստ
էի... օրիորդ Աղանիին կերակուր բերէք:

Օրիորդ Աղանին ճառ քարոզ կըսէ և կմեկնի միմուտով.
«աստեղ ալ միշտ ուրիշները վար զարնելու խօսքեր կընեն»:

Բնորոշակուած հատուածի նման են և միւս
բոլոր թաղերի նկարագրութիւնքն: Միով բանիւ
յոյժ զուարճալի և ծիծաղաշարժ աշխատութիւն:

Բ.

«Աղէքսանդր Բ. Վայսր Ռուսիոյ, 1855-1880»:
Ն. Գ. Յ. Ստրենեանց. Մոսկվա, 1880:

Մեր ամենողորմած Աղէքսանդր Վայսր կենսագ-
րութիւնն, հանդերձ Ռուսիոյ մէջ վերջին քսան
և հինգ տարւոյ ընթացքում կատարուած գործ-
քերով՝ ահա այս է մատենիս բովանդակութիւնն,
որ գրուած է պարզ լեզուով և կարգացվում է
շատ հեշտ:



ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՏԱՐԵԳԻՐ

«Փարոսի» նախորդ հրատարակչէն: — Ազգային քաղաքական տեսութիւն: — Հայաստանի ազգային: — Գուլչիներոյի յանձնուիլն: — Թղթակցութիւնք՝ Մոսկուայից, Կ. Պօլսից և Փարիզից:

Ը.

«ՓԱՐՈՍԻ» ՆԱԽՈՐԴ ԿՐԹԱՐԱԿՂԵՆ

Փ Ա Ր Ո Ս Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի հանդէսն սկսուում է այս տարովս հրատարակուիլ որպէս 'ի Տէրութենէ թոյլատրեալ պարբերական տպագրութիւն: Ազգուց կար ցանկութիւն տեսանել այս հանդէսը՝ թէ մեր կողմից և թէ մեր ազգայնոց կողմից՝ իբր պարբերական տպագրութիւն: Այս վերջապէս յաջողեցաւ մեզ: Մնայ ուրիմն այսուհետև, որպէս ասուած էր նորա յայտարարութեան մէջ՝ որ մեր ազգայինք ևս, եթէ ճշմարիտ ցանկանում են ունենալ այսպիսի պատկերազարդ հանդէսներ, պաշտպանեն այս հրատարակութիւնը և թոյլ չտան նորան մեռանելու մատաղ հասակի մէջ: Պարտական ենք զովութեամբ յիշելու այն ձեռնառութիւնը, որ անցեալ արի ցոյց տուին մեզ Պետրբուրգի, Բագուայ, Ալեքսանդրապօլու, Լըբանու, Միսֆէրապօլու, և այլ քանի մի Հայաստանի քաղաքների մեր ազգայինք, որք չմանեցան Մոսկուայի և 'Կոր-Վոսի' ջեանի մեր ազգայիններին, որոց յոյսովն եթէ մնայինք՝ գուցէ մէկ տար ևս հրատարակելու կարողութիւն չպիտի ունենայինք: Բայց պահանջողութեան մէջ, ինչպէս երևում է, վերջինքս ամենից աւելի խիստ գանուեցան: Մոսկուայի մեր ազգայիններին ասողը եղան՝ թէ մեր հանդիսի մէջ կարգալու բան չկայ, ուստի և երկու ուրբի տայն աւելորդ են համարում. իսկ ոմանք, համարձակեցան ասելու նաևս՝ թէ մենք «Փարոսը» մեր #էջի համար ենք հրատարակում, թէ նոքա երբէք մեզ խնդրել չեն նորան հրատարակել, ուստի և գործ չունին նորա հետ... Ահա ազգասէրներ, ահա համալսարանական ուսմամբ զարգացած անձինք, ահա լուսաւորեալ համարուած կրթիչք մեր մատաղ սերնդին... Բայց այս ամենայն դեռ ոչինչ: Մենք, ճշմարիտ է, ծանօթ էինք այլ և այլ դժուարութիւններին, որք անպակաս են պարբերական հանդէսներ հրատարակելու ժամանակ, և զիտէինք՝ թէ ամենեցունց սիրելի լինել անկարելի է, ըստ որում ոչ ամենքն միակերպ են մտածում և խորհում: Այժմ մի նոր դժուարութեան ևս ծանօթացանք, այժմ իմացանք, թէ ամեն մէկ տպագասէր կամ գիտուն

ձանաչուած անձնի պատկերն տպագրել կարելի չէ, այլ հարկաւոր է նախ և յառաջ քննել և իմանալ՝ թէ այդ անձնոց նրպիսի յարաբերութիւն ունեցել է սորան կամ նորան: Աւ զայն ձեզ՝ եթէ տպագրէք այնպիսի մի անձնի պատկերը, որ՝ որ և իցէ պատճառով, մէկին սիրելի եղած չէ, թէև այն անձնը ընդհանուր ազգից ձանաչուած լինի որպէս ազգասէր, գիտուն, նշանաւոր մարդ... զուք իսկոյն կորուսանում էք ձեր յարգը, և ձեր հանդէսը, որ առաջ զովութեան էր արժանանում, դառնում է անպիտան, անօգուտ... զուցէ և վնասակար:

Գիտեմ շատ ծանր պիտոյ է լինի լսել այս ճշմարիտ ազգասէրներին և ճշմարիտ ազգային գրականութիւնը պատուողներին և պաշտպանողներին. բայց ի՞նչ պիտոյ է առնել իրողութիւնը կմնայ իրողութիւն. ես յուսով եմ, որ «Փարոսի» նոր հրատարակիչն չերկնչելով այսպիսի անհաճոյ հանգամանքներից՝ կաշխատէ քաջութեամբ յառաջ տանել սկսուած գործը և սիրելի առնել այս հանդէսը ոչ լոկ այս կամ այն անձնաւորութեան, այլ ընդհանուր ազգին, որ անտարակոյս զիտէ կամ լաւ ևս ասել՝ կարող է գնահատել մեծ մարդիկը, առանձ. քննելու նոցա ընտանեկան յարաբերութիւնքը, և օգնել գեղեցիկ ձեռնարկութիւններին: Մեզ մեծ միսթարութիւն էր անտարակոյս կարգալ 'ի Փարիզ հրատարակեալ գաղղիարէն *Le Temps* անուն լրագրին մէջ «Փարոս Հայաստանի» հանդիսի մասին հետեւեալ տողերը. «*Paros-Haïasdani*, ասում է լրագիրը, *revue illustrée, paraissant à Moscou depuis deaux ans. C'est une publication très bien faite et qui mériterait d'être plus connue et plus répandue*». Թող ուրիմն մեր հանդիսից անբաւական մնացողներն և նորա հրատարակութեան համար երկու ուրբի տալ ինայողներն, կարգան այս տողերս և ամաչեն: Աւելի խօսք չունենք ասելու:

Բայց թող ներուի մեզ 'ի մէջ բերել այս տեղ Փարիզից գրուած մեր մէկ ազնիւ և գիտուն ազգացի նամակից հետեւեալ քանի մի տողերն, որք նուիրուած են «Փարոս Հայաստանի» հանդիսի

առաջակայ գործունէութեան և որք ճիշդ նկարագիրք են նորա ցանկութեանց և ձգտողութեանց:

»Փարոս՝ այսուհետև առաւել ևս սիրալի պէտք է լինի ամենայն Հայու, գրում է մեր ազգակիցն, որովհետև Հայուհւոյ մը սիրան է որ պիտի կենսաւորէ զայն, և Հայ սրտերի պիտի ներշնչէ զերկնասփիւռ աւիւն առաքինութեան, բարոյականի և ազգասիրութեան:

»Դուք աշխատեցայք Վփարոս՝ առնել շահաւէտ Ազգին. իսկ հանձարափայլն Չեր Ամուսին՝ պիտի նովաւ փառք և պատիւ յաւելացնէ Ազգին յաչս օտարաց, ապացուցանելով՝ որ Հայուհիք զիտեն նչ միայն սրտիւ՝ այլ և գրչաւ մըցիլ ընդ եւրոպուհիս...»

Յուսով եմ որ այդպէս էլ լինի:

Ի վերջոյ կարող չեմ չը յայանել իմ առ ՚ի սրտէ շնորհակալութիւնս նաև ընդհանուր հայ



ԳՈՒԼՉԻՆԵՕ ՔԱՂԱՔ ԱԼԲԱՆԻՈՅ

որ պոստ-բարապաղոց:

»Փարոսն մի ծաղիկ պիտի լինի, քաղցր վան Հայրենեաց, որ պիտի բուրէ Հայ Ազգիին գարնանափայլ զեփիւռը:

»Փարոսն վերջապէս պիտի ներկայացունէ Հայ զպրութեան մի նոր փառքը, Հայ խմբագրութի մի, սիրելի և ակնաճեղ իւր ասղանդովն, իւր հայրենասիրութեամբ և իւր շնորհազեղ անունովը՝ որ զինաստութիւն կը ծաւալէ:

մամլոյն, թէ Ռուսաստանի և թէ Թուրքիոյ, իմ հանդիսիս ցոյց տուած խորին համակրութեան համար, զեղեցիկ հասկանալով՝ թէ իմ ցանկութիւնս և կամքս եղած էին միշտ և են՝ որպէս ճիշդ զրել էր Ս. Պօլսոյ Մամուլ հանդէսն՝ յանդիման կացուցանել ինչ որ մեր պարծանքն է, ինչ որ մեր ըզձանքն է, ինչ որ մեր արիւնն է...»

Զարմայր Մ. Մանրեանց:

Բ.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Պոլս, 13/25 Նոյեմբ. 1880.

Երեք տարի հազիւ կայ՝ որ Հայոց ազգն, քարերէ 'ի վեր նուաճեալ և իւր երկիրն յարասե ոսնակոխ եղած, իւր ամբողջութիւնն պահած էր սակայն, 'ի շնորհս իւր հարց կրօնին, զոր ոյժգին ընդգրկած կը մնար: Խլեցին և 'ի բաց քերեցին իւր վերայէն ամենայն ինչ՝ որ իրաւունք ունի վայելելու այն ամեն ժողովուրդ, որ մի պատմութիւն ունի, և այն ամեն անհատ, որ օգ կը շնչէ: Իւր կրօնքն ջնջելու համար ամեն ճիգ փշրեցան նորա այս հաստատամտութեան դէմ: Այսպէսով Հայոց Ազգն ճանչցուած էր աշխարհի առջև իբր մի լոկ կրօնական ցեղ և չունէր առաւել մի նշանակութիւն: Չէր կարող բաղդաանել իւր անձն ժամանակակից ազգաց հետ և կը գոհանար ապրել քաղաքականապէս իւր անցեալին մէջ:

Երեք տարիէ հետ պարագայներն, զուցէ իսկ իւր ճակատագիրն, այլ կերպ դատեցին և այժմ քաղաքական մի կեանք սկսաւ վարել: Այս խլրատումն զլիաւորապէս զգալի է Թուրքիաբնակ Հայոց համար: Պէրլինի Ա հաժողովէն 'ի վեր յայտ յանդիման ամենեցուն և ոչ յանգէտ Օսմանեան կառավարութեան մի Հայկական խնդրեց ծագած է և որոյ լուծումն՝ եթէ յապաղել կերևի, այդ յապաղումն իսկ նորա զգեցած աշխարհաւարական կերպարանօքն պէտք է մեկնել:

Հայկական խնդրին ըստ ինքեան մի պարզ խնդիր է և կատարելապէս իրաւացի: Օսմանեան Հայք 'ի սկզբանէ անախ չեն ունեցած անկատարելի մի պահանջումն, այլազերկ մի փառասիրութիւն և ոչ իսկ անակնկալ և շուարեցուցիչ մի ինքնիշխանութեան փափաք: Նոցա պահանջքն մի միայն յենեալ են արգարութեան և մարդասիրութեան վերայ և կ'սպասեն նոցա կատարումն 'ի դիմաց այն

Տէրութեանց, որք ըստանձնած են հանդիսականապէս, ոչ միայն Արևելեան Վրիստոնէից վիճակին բարւոքումն, այլ և նոյն իսկ այն կառավարութեան փրկութիւնն, որու երկիրն հանդիսավայր դարձած է ամեն տեսակ զեղծմանց խժոժութեանց: Թուրքիոյ Հայերն, ամեն կողմ առանց բացառութեան, անիրաւութեանց, կեղերմանց, կենաց և պատույ

անվստահութեան ենթարկեալ են դարերէ 'ի վեր: Նոքա գիտեն՝ թէ սոցա ամենեցուն սկզբնական պատճառն կեղրոնական վարչութիւնն է, որ չէ կարող կամ չը կամենար սանձել զօշաբաղ պաշտօնատարաց դժնդակ ընթացքն և ոչ իսկ զսպել վերջնական կերպով Վրոզաց, Աւարաց, Չերքեզաց, և այլն, հրոսակներն, որք հանապաղ կը յարձակին մի խաղաղ ժողովուրդեան վերայ և որ ուրիշ բան չը խնդրէր՝ եթէ ոչ ապրել իւր ճակտի քրտինքովն: Գիտեն թուրքիաբնակ Հայերն, որ եթէ ընդփոյթ դարման չը տարուի այս անտանելի կացութեան,



ԻՇԻԱՆՈՒՆԻ ՄԱՐԻԱ ԼՈՒՍԻՆԻԱՆ:
(Դեմ էջ 26)
ПРИНЦЕССА МАРИЯ ЛУЗИНЬЯНЪ. LA PRINCESSE MARIE de LUSIGNAN.
(Պատկերանկարեցաւ և փորագրեցաւ յասուկ մեր հանդիսի համար)

Չարգն, սոյն և գաղթականութիւնն տակաւ առ տակաւ պիտի ամայեցնեն իւրեանց հարց երկիրն, որ լի է այնքան քաղցր և նուիրակաւ յիշատակներով: Թուրքիաբնակ Հայք, որոց ոչ որ կարէ ուրանալ այն ինքնածին իրաւունքն՝ որ ունի ամեն ժողովուրդ չանհետանալոյ համար, կամին միայն վայելել այսուհետև ապահովութիւն կենաց, պատուոյ և ընչից: Պամին տէր լինիլ, ոչ այլացեղ ժողովուրդոց և երբեմն իւրեանց հարստահարչնութիւն, այլ աշխատութեամբն ստացեալ արդեանց: Այս է ահա նաև Հայկական խնդրի անուամբ պետական անձանց ըմբռնածն: Հայք նախ տիրող կառավարութեանէն և երկրորդաբար իւրեանց պաշտպան կանգնող տէրութիւններէն կը խնդրեն այնպիսի մի կարգադրութիւն Արմենիոյ համար, որ

անարդիւն չը լինի, ինչպէս եղան ցայժմ ամեն խոստմունքը և ՚ի ցոյցս տրուած մի քանի հրովարտակեր: Այս գործնական կարգադրութիւնն, զոր կը պահանջեն՝ «Աւրչական Խորհրդի» գրութիւնն է՝ որ այնքան օգտակար հեռուութիւններ ունեցաւ ՚ի Լիբանան:

Ազգին թշնամիներն, այն է արդարութեան և յառաջադիմութեան խոչնդոտներն, կը աքնին ըստ քմաց և իբր փաստ իւրեանց յետադէմ կարծեաց մեկնել չայոց այս ամենապարզ և խաղաղական ձգտումն: Հայկական Խորհրդի երևան գալէն ՚ի վեր կը ջանան զքօղել իւրեանց չարակամ զգացումն, վերադրելով նոցա անգոյ և տարաժամ գաղափարներ: Բռնաբարութեանց դէմ բողոքն իբր պատմութիւն կը նկատեն: ()տար մի տէրութեան քանդատիլն, որ հարստահարեալ քրիստոնէից պաշտպան հռչակեալ է, մասնութիւն կը յորջորջուի...

Արմենիոյ բարեկարգման խնդիրն չէ կարող ուրեմն կայանք առնուլ և կամ անհետանալ, քանզի իրաւանց մի խնդիր է, որով և անխուսափելի: Անհամբեր սրտերն պէտք է համոզեալ մնան, որ վաղ կամ անագան, պիտի ստանայ նա իւր լուծումն: Ի՞նչպէս ոչ ոք զիտէ վայն գուշակիլ: Պէտքերն և պարագայներն կարեն փոփոխել նորահանգամանքներն, բայց յետս մղել, իբրէք: Բայց ինչ որ ապագան վերապահած ևս լինի Հայկական երկրին համար, կարող եմք աներկբայ հաստատել՝ որ նորա զգենալքը նոր վիճակն չը կարէ այժմեան վիճակէն լուսազոյն չը լինիլ այն տեղի ժողովրդոց համար առհասարակ. քանզի չէ հնար աւելի վատթար մի կայութիւն երևակայել մի երկրի մէջ, որպէս այժմ: Թուրքիաբնակ Հայերն ներկայացեալ են սահմանադրապէս ՚ի մի Ազգային Ժողով: Սա կամի անշէջ պահել հանապազ Հայկական այս Արամնունդն, և խոհեմ և լուրջ մտօք յանձնած է իւր գործոց առաջնորդութիւնն իւր Ալեքէի Պատրիարքին, որ անդուլ կաշխատի ազգին իրական օգտին, առանց իսկ երկնչելու՝ որ արդէն իւր սկարացեալ մարմինն չը լքանի աւաւել: «ՆԵՐՍԷՍ Պատրիարքն է տիպար քաջ Հովուի: Ազգիս փրկութեան ժամն արդէն հասած կը լինէր՝ եթէ ամեն ուրէք Հայ Հովիւք նորա նմանէին...

Ազգային Աւրչական կազմակերպութիւնն, որպէս անօրինած էր Սահմանադրութիւնն, մի մասնաւոր բայց կարի պիտանի փոփոխութիւն կրեց այս միջոցիս, զոր պէտք չէ լռելայն անցնիմք, քանզի ցոյց կը տայ մեզ՝ թէ որքան փորձառութիւնն դէպի կատարելութիւն կը մղէ, և թէ ինչ

որ տեսականին մէջ կատարեալ կերևի, գործնական մասին գալով կը տեսնուի՝ թէ նա զուրկ չէ թերութիւններէ: Ազգային Սահմանադրութիւնն անմիջական կերպով ընդհանուր ժողովէն ընարեալ, երկու ժողով և չորս խորհուրդ արամադրած էր: Սոյն ժողովոց և խորհուրդոց գործառնութիւնն, մանաւանդ քաղաքական գործոց մասին, ակնկալեալ արդիւնքն չէր կարողացած ընծայել ցայժմ, քանզի պատասխանատուութիւնն հաւաքական լինելով ժողովականաց շատերն անփոյթ կը մնային նուիրելու իւրեանց յատուկ աջակցութիւնն: Այս անտեղութեան զարման տանելու և ազգային գործոց լուսազոյն մի ուղղութիւն տալու համար, իբր Սահմանադրութեան վերաքննութիւնն կատարեցաւ, որոշեցաւ միաձայն հաւանութեամբ՝ որ փոխանակ Ազգային գործերն խորհուրդներու յանձնելու Ալեք Խորհրդակցականայ յանձնուի և նոցանէ միայն բազկանայ Աւրչական Խորհուրդն: Մէն մի խորհրդական պատասխանատու է այժմ առ Ազգային Ժողովն իւրեան յատուկ ձեւով համար անհատաբար 1), իսկ հանրական խնդրոց համար ամենքն հաւաքաբար: «Նախագահ Արբազանն կը հրաւիրէ երեսփոխանաց մին կազմելու այն վարչական խորհուրդն, և սա կազմեալ կը ներկայանայ ապա Ազգային Ժողովին: Այս կերպով կազմուած վարչութիւնն, որ կը գործէ մի քանի ամիսէ հետէ, արդէն ցոյց տուած է թէ որքան նախկին կազմակերպութիւնէն յարմարագոյն է պարագայից և ազգային շահերուն:

Արկորդ մի կարևոր որոշումն այն եղած է, որ Ազգային Ժողովն սկզբամբ ընդունած է թէ ամեն ընդհանրութեան վերաբերեալ պաշտօն, հարկ է իւր զրամական փոխարինութիւնն ստանայ և այսպէս կը պահանջեն իսկ արդարութիւնն և ժողովրդեան շահերն: Ի՞նչպէս կարելի է պահանջել մի հասարակաց պաշտօնեայէ արթնութիւն և հաւատարմութիւն, ինչ իրաւամբ կը կոչես մի անհատ՝ որ թողու իւր անձնական շահերն, վատնէ իւր ժամանակն և իւր առողջութիւնն վտանգելով՝ գայ զոհէ ամենայն ինչ ազգին սիրուն, և, ո՞ր զիտէ, գուցէ իբր վարձատրութիւն իւր ամեն զոհողութեանց, հուսկ ուրեմն լուտանք և քարկոծումն ստանայ: Չունիմք իրաւունք սպասելու մեր ազգայիններէն, ուրիշ ազգաց անհատներէն աւելի ազգասիրութիւն և անձնուրացութիւն: Ընդհանուր Ժողովին այս որոշումն լու է, ուրեմն և ըստ ամենայնի իրաւացի: Առ այժմ, փութամբ յաւելցնել,

1) Այս վեց ձեւերն են. Արծնական, Յարաբերական, Ներքին, Գառական, Արթական և Տնտեսական:

լով իբր մի սկզբանք կարող է նա հռչակել այս բան, նկատողութեան առնելով Ազգային սնտուկին տազնապալեց վիճակն: Այս է նաև զլիսաւոր արգելքն մեր ամեն պիտանի ձեռնարկութեանց: Գրամական յարատև անձկութեան սոսկ պատճառն, արոց հաւաքման գծուարութիւններն են և այս գծուարութիւնք ևս ինքնաբեր հեռեանք են մեր ազգային Աւարչութեան միմիայն բարոյապէս զեռնեալ լինելուն, ընդդէմ անյօժարամիտ անձանց, որք կը դժկամակեն միշտ ստացեալ իրաւանց փոխարէն հատուցանել առ ազգն իւրեանց պարտաւորութիւններն: Ազգերն կառավարելու և դէպի յառաջադիմութիւն նոքա մղելու համար, այս սոսկ բարոյական զօրութենէն աւելի ազգու մի զօրութիւն անհրաժեշտ է, և այս պատճառաւ է ահա, որ Ազգային Սահմանադրութենէն ամեն ակնկալեալ բարեք չը գոյացան ցարդ:

Ազգային տեղական և իւր պիտոյիցն յարմար մի քաղաքական կազմակերպութիւն, որքան նախնադոյն և կենսական խնդիր համարուած է, որքան և առանց նորա ամենայն ինչ սակաւ արգասու է, սակայն ժողովրդեան կրթութիւնն ևս մոռացուած չէ բնաւ, և Առստանդնուպօլսոյ Մեքայեալ Ընկերութիւնն անխոնջ կը յառաջանայ իւր ընթացքին մէջ: Սորա զուգահեռական ընթացքով կը ջանան յարատևել նաև «Վարդապետաց Հայուհեաց» և «Անձնուէր Հայուհեաց» ընկերութիւններն, որք միակ տեսակէտ ունենալով Արմենուհեաց և նոցա անվերպելի միջոցովն ընտանեաց մտաւորական զարգացումն, ժրջան կաշխատին իւրեանց գծած սահմանին մէջ: Այսպէս իգական սեռին ազգային կրթութեան մէջ ըստանձնած դերն ոչ սակաւ նշանակութեան արժանի է, և ընդհանուր ազգին ընտրելագոյն շաղկն մէջ մի քայլ առած լինին ստուգիւ կաւետէ մեզ:

Արմենիոյ մէջ նախակրթական դպրոցաց թիւն որ ըստ օրէ կաւելնայ և շատ քաղաքներու մէջ բնիկ ժողովրդին բարի օրինակ կը լինին այս ընկերութիւններն, որ իւրեանք ևս դպրոցներու հաստատման ձեռնարկին: Այս գովելի ջանքն առաւել ևս զգալի է մանաւանդ այն գաւառաց մէջ, որք բանիբուն, ազգասէր և անշահատենդիր Առաջնորդներ ունենալու բազմն ունին: Վժբադաբար սոցա թիւն սահմանաւոր է յոյժ և այս է ահա Հայոց անհրաժեշտ պէտքն, որ վաղ ընդ փոյթ ընուլ հարկ է: Արդիւնաւոր եկեղեցականք չեն պակասիր մեզ, բայց նոքա փոխանակ գնալու ՚ի գաւառս և ժողովուրդին չոր ու սև հացին մասնակցելու, նախապատիւ կը համարին մայրաքաղաքին մէջ կամ

նորա շրջակայներն դեգերիլ և վայելիլ կեանք անխռով, ուրանալով այսպէս իւրեանց կոչումն:

Մի քիչ յառաջ ասի բառն հնչեցինք: Յանկալի էր մեզ «Փարոսի» վերջին թուոյն մէջ այս պատուհասին վերայ խօսելէ զկնի, ոչ ևս առիթ ունենալ գալու այդ տիրալեց նիւթին վերայ: Սակայն այս մասին մեր ստացած տեղեկութիւններն ոչ միայն քաջալերական չեն, այլ և այնպէս կերևի, որ նախորդ տարիէն սաստկագոյն է այն, զլիսաւորապէս Աստուրականի մէջ: Առստանդնուպօլսոյ սովետոց կեդրոնական Մասնաժողովն ոչ մէկ ջանք կը զանայ օգնութիւն հասուցանելոյ համար: «Ասցայժմ անհնարինն կատարած է, հաւաքելով շուրջ 27,000 Օսմանեան ոսկի, և անցեալ ձմեռ հայթայթելով սովետոց ոչ միայն ուտեստ և հագուստ, այլ և ամառն սերմանք, գործիք և եզներ, որպէս զի սովն չը գայ կրկին անգամ ջարդ տալ այդ խղճալեաց: Սակայն աղէտքն մեծ էր և վիհն խորին, ընդհանուր երկրին վերայ դրամական տազնապն օրքան զօր կը սաստկանար և Մասնաժողովն չը կարողացաւ հաւաքել ինչ որ պէտք էր: Այժմ նա առանց վհատելու իւր ճիգն կը կրկնապատկէ: Հարկ է որ մեք ևս մեր զօհողութիւններն կրկնապատկեմք և փրկեմք այն հազարաւոր ազգայնոց կեանքն, որք դատապարտեալ են այս ձմեռ անօգնական մեռանելու: Միթէ այս սովն չէ՞ մեզ, ՚ի մէջ այլոց, և մի շօշափելի փաստ՝ թէ ժամ է այլ բարեօքելու այն երկրին նիւթական կացութիւնն քաղաքականապէս, և թէ՛ հարկ է միանգամայն փարատել այն ժողովրդեան վրայէն տգիտութիւնն, որ մայր է ամեն աղէտից և աննախատեսութեան: Սովետոց Մասնաժողովին հաւաքած դրամին մի քառորդ մասն հազիւ օտար ազգերէ յուղարկուած է, մնացեալ մասն Հայոց ողորմած սրտէն բղխած է: Այն սիրան դարձեալ պիտի գլխայ այն թշուառներուն վերայ, որք մեր հոգին և մեր արիւնն են:

Օտարէն առաջ մեք մեր անձնէն յուսամք օգնութիւն: Այս է, ամեն պարագայի մէջ, փրկութեան միակ և ապահով միջոցն:



P. S. Ներփոկեալ կ'ընդունիք Պէդճեան Յարութիւն Ամիրայի ամենաճիշդ լուսանկար պատկերն, որ մասնաւորապէս «Փարոսի» համար շինուած է, ևս և մեր Սրբազան Պատրիարքի պատկերն, որ երբ օր է որ քաշուեցաւ «Փարոսի» բարեկամներուն թախանձանացն անսալով: Այս անգամ մեր Ներսէսն ամեն սնտոի զարգարանքներէ մերկացեալ կը ներկայնայ մեզ, ինչպէս կամիմք որ երևի իւր սիրելեացն:

Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԿԱՅՆ:

ՏԱՐԵՂՊԻ և ուրս լրագրաց և օրագրաց միշտ և շարունակ հետամուտ եղողն անտարակոյս նշմարում է, որ վերջին ժամանակներումս Երջնիա (Հայաստան) անունս հանդիպում է նոցա մէջ ստէպ ստէպ: Առաջուան ժամանակներում ո՞վ էր լսել կամ ո՞վ էր տեսել՝ որ Աւրուպայում խօսեն կամ գրեն Հայերի վերայ մի բան: Աւ եթէ խօսակցութիւնք լինում էին, նոքա ևս վերաբերում էին ըստ մեծի մասին Հայոց կրօնի և հաւատի վերայ՝ թէ այս ինչ կամ այն ինչ վարդապետ, ուսումնական, լրագրապետ իւր գրումաւ մէջ անուանել է Հայերին հերետիկոս, արիոսական, և այլն. իսկ այժմ լսում ենք և կարդում՝ թէ Հայք քաջ մարդիկ են, թէ նոքա ունեցել են պատմութիւն և կեանք, թէ նոքա ունին ապագայ, թէ նոցա առջևում կայ ասպարէզ մարդկութեան օգտակար լինելու, և այլն: Համեմատելով այս երկու հանգամանքը կարելի է չըւրախանալ այսպիսի փոփոխութեան վերայ, և փառք Աստուծոյ, որ անցան գնացին այն ժամանակներն, երբ կրօնի և հաւատի ուղղափառութեան վերայ վիճարանութիւնք էին լինում...

Մեր ընթերցողաց անտարակոյս յայտնի է, որ մեր Հայաստան աշխարհն գտանվում է այժմ իւր վերջին ճգնաժամին մէջ, որի հեռանքն պէտք է լինի կամ յարութիւն և կամ մահ յաւիտենական: Ինչո՞նի մեր քաղաքագէտ թղթակիցն հաղորդում է մեզ՝ թէ արդէն հանդիսիս ծանօթ Հայասէր Պ. Ղէյմս Պրայս, որ ամենից ճարտարախօս և ջերմ պաշտպան է կանգնած Հայոց պահանջմանց Անգղիոյ Խորհրդարանին (Պարլամէնտի) մէջ, և որի պատկերն ներկայացնում ենք այսօր մեր ընթերցողաց, շարունակում է յուսադրել մեզ և

խոստանում է Հայաստանին աւելի գեղեցիկ ապագայ: Փառք, պատիւ և շնորհակալութիւն Հայասէր Անգղիացւոյն... Ո՞վ կարող էր մտածել սուրանից քանի մի տարի առաջ՝ թէ Հայք Անգղիական Խորհրդարանում պաշտպան պիտի ունենան...
 «Նոյն մեր թղթակիցն, իւր նամակին մէջ, զըրում է մեզ և այս.

«Հայկական խնդիրն, ինչպէս զիտէք, ասում է նա, Այս-Ստէֆանոյի 16-դ յօդուածովը ըսկաւ: Այս յօդուածը Հայոց ազգին ապագան կը կապէր միմիայն Ռուսիոյ հետ: Արբ Պէրլինի Վեհաժողովը գումարուեցաւ, բոլոր Աւրուպական Տէրութիւնք երբէք Հայոց խնդիր չէին ծանչեր և չը պիտի ծանչէին: Բայց ՚ի վերջոյ 61-դ յօդուածը ծնաւ Պէրլինի Վեհաժողովը և սովաւ Հայոց ազգը փոխանակ միակ Ռուսիոյ պաշտպանութեան ներքև մնալու, ընդհանուր Աւրուպիոյ պաշտպանութեանը ներքև անցաւ: Բսի որ այս Հայկական խնդիրը Աւրուպիոյ Տէրութիւնք

չէին զիտեր և չը կար նոցա օրակարգին մէջ: Սակայն մեր Սրբազան Աերսէս Պատրիարքին շնորհիւր Հայոց ապագան մի խնդիր եղաւ, և որու համար մենք մի միայն նորան պարտաւոր ենք:

«Անգղիական կառավարութիւնն իսկ Հայոց խնդիրը ուսումնասիրած չէր: Պիտէք, որ Անգղիոյ մէջ հասարակաց կարծիք պէտք է գոյանայ, որպէս զի խնդիր մը կարենայ իւր կարևորութիւնն ստանալ, և ես ուրախ եմ յայտնել ձեզ, որ այս հասարակաց կարծիքը գոյացած է արդէն, և Անգղիոյ պաշտօնատարաց զըւելը գանուող անձը, Պէրնսֆիլտի վարչութեան պէս, խոստացող և չը կատարող չէ: Նոյն իսկ Անգղիոյ Օգոստափառ թագուհին, Խորհրդարանի փակման առթիւ ար-



ՀԱՅԱՍՏԻ ԺԵՄՍ ՊՐԱՅՍ
 Անբաս Անգղիական Խորհրդարանի: Տես «Փարոսի»
 1880 թի Բ. պէտրն:
 ДЖЕМСЬ БРАЙСЬ. | JAMES BRYCE.
 (Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

+



ԹՈՒՐԿԱՅ ԳԵՐՎԱՆՍԵՐԱՅ Ի ԹԵՍԱԼՂՈՆԻԳԷ

տասանաճ ճառին մէջ Հայկական խնդրոյն վրայ խօսեցաւ, ինչ եղանակ որ խօսեցաւ Մօնթէնէկոյի (Չէրնադօրիայի) և Յունաց վրայ: Անգղիոյ խորհրդարանին մէջ նաև մեծ եռանդով վիճարանեցին այս մասին: Այս գիտցէք, որ Հայոց խնդիրը Անգղիոյ ժողովուրդին և Տէրութեան առջև որքան մեծ կարևորութիւն ունենալն ընդհանրապէս ըստ բաւականի չէ գիտցուած տակաւին:

Պայց այդ 61-դ յօդուածէն ինչ օգուտ պիտի ելնէ մեր ազգին համար: Ոմանք ըսին՝ թէ մենք պէտք է բոլորովին անկախ լինինք: Սակայն ես չեմ կարծիր, որ այս կերպը օգտակար լինի մեզ,

թէպէտ որպէս յառաջ զիմոզ ազգ մը, բնական է՝ որ անկախութիւն կը բաղձանք և պէտք է բաղձանք: Ոմանք ևս Վարչական Ինքնօրինութիւն (Autonomie administrative) ունենալ օգտակար դատեցին մեզ, և ես իսկ այս կարծիքէն եմ և կը յուսամ՝ թէ մէկ օր արժանանամք Վարչական Ինքնօրինութիւն ստանալու:

Ես կը յուսամ որ Հայկական խնդիրն Վարչական Ինքնօրինութեամբ պիտի վերջանայ, որու համար մեզ ամենեցունցս աշխատել հարկաւոր է ոչ լոկ խօսքով, այլ գործով...

Տայ Աստուած որ այդպէս կատարուի:

Գ. ԳՈՒՂԻՆԵՑՈՅԻ ՅԱՆՉՆՈՒԻՆ

Երոզուար գործերի մէջ ամենանշանաւորն՝ որ կատարուեցաւ վերջին օրերումս, Ալեքանդրի Պուլչինեօ քաղաքի (որի պատկերն տպագրուեցաւ ներկայ տետրիս մէջ), յանձնուելն է Քարատաղցոց, որ եղաւ Նոյեմբերի 16 ին: Պուլչինեօյի յանձնուելէն յետոյ Քարատաղցոց Արևիկոյոս Իշխանն հեռագրից Սուլթանին՝ թէ ճշդութիւնն, որով կատարուեցաւ այս գործս, գրաւական է նորա համար, որ այսուհետեւ բարի յարաբերու-

թիւնքն երկու երկրաց մէջ չպիտի խանգարուին: Արևիկոյոս Իշխանն յայտնեց յայսմ մասին և իւր առ ՚ի սրտէ բաւականութիւնը:

Ուրեմն այսուհետեւ կարգն անցանում է Յունաց խնդրոյն, և յետոյ անտարակոյս պիտի գայ Թուրքիոյ Հայոց խնդրոյն:

Այսպէս էր խոստացել Անգլիան, և յոյս կայ՝ որ նա կատարէ իւր խոստումը, եթէ ներկայ՝ Ղրղաւտոնի՝ նախարարութիւնն երկարատե ֆնայ:

Ե. ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԱՍՏՂԿԻ ՆԱՄՈՒՆԵՐՆ Ի ՄՈՍԿՈՒԱՅԻ

Մոսկուա. 1 Գեկտ. 1880 տի:

Ես մէկ Հայ կին եմ, և անունս է Աստղիկ: Եթէ պատմութեան նայենք իմ անունս շատ հին անուն է. նա ըստ ասանդութեան մեր ազգային պատմութեան՝ մեր Գիւցազն Հայկ նահապետի դստեր անունն է, իսկ, ըստ հին ազգային դիւցաբանութեան, Հայ աստուածների մինի անունն է, որ ունեցել է իւր գլխաւոր մեհեանը Աշտիշատ քաղաքում: Բայց որպէս և իցէ, այսպէս թէ այնպէս, յայտնապէս երևում է այն, որ անունս Աստղիկ ամենահին, գուցէ առաջին անուններից մինն է, որ արվել է Հայ կնոջ:

Եւ ահա ես, ՚ի ներքոյ ստորագրեալս, որպէս Հայ կին, առաջին Հայ կնոջ անունով, ողջունում եմ բոլոր Հայ կանայքը, բոլոր Հայ օրիորդքը. ես ցանկանում եմ նոցա, որպէս ազնիւ սերնդոց Հայկեան Աստղիկ, բաղդաւորութիւն, յաջողութիւն և յառաջագիմութիւն:

Ասացի յառաջագիմութիւն... Բայց կայ արդեօք Հայ կանաց կեանքի մէջ յառաջագիմութիւն: Պիտոյ է խոստովանել թէ մենք Հայ կանայքս դեռ շատ յետ ենք մնացել լուսաւորեալ ազգերից, թէև արտաքին ձևով, մոզայով, ճշմարիտ է, երբեմն շատ ու շատ նմանում ենք Փարիզուհեաց...

Մեր առջևում, սիրելի քոյրեր, լայն ասպարէզ կայ տշխատութեան: Հայրենեաց փառքն ու յառաջագիմութիւնն, մեր

սրբազան պարտականութիւններից մին պիտի լինի. կրթել և գաստիարակել մեր դուստրերը այնպէս, որ նոքա եւրոպական ուսումն ստանալուց յետոյ ևս մնան Հայ, Հայի զաւակ, չամաչէն իւրեանց ստացած ուսումով Հայ մարդոյ կին լինել, և ճանաչեն իւրեանց քաղաքական քաջութեան պարտաւորութիւնքը... ահա սոքա լինելու են մեր բոլոր ջանքն, նպատակն: Մենք մեղաւոր չենք, որ մեր մէջ դեռ չերեւցան Բիչէր-Սթուներ, Մադամ Պֆէյֆերներ, Եւգենիա Թուրներ, Զօնթագներ, Ժօրժ-Զանգներ, Մադամ Սթալներ, Քօչէվարովներ, և այլն: Անտարակոյս կը լինի Ժամանակ, որ Հայ կինն ևս ցոյց կուտայ իւր տաղանդը, իւր հանճարը: Մենք համոզուած ենք, որ Հայ կինն, որպէս և Հայ մարդն, կարող է եթէ կամենայ ամենայն բան կատարել և եւրոպուհեանքից յետ չմնալ: Ամեն տեղ բացուած օրիորդաց դպրոցներն, ամեն տեղ տեսնուած ջանքն և աշխատանքն ուսումն ստալու և տարածելու մեր ազգի մէջ, ասպացոյց են՝ թէ մենք գտանվում ենք նոր և գեղեցիկ ճանապարհի վերայ: Արդէն ոչ ոք կարող է ասել և պնդել թէ Հայ կնոջ կարգաւ և գրել հարկաւոր չէ, թէ նորա նշանակութիւնն է միայն իւր ամուսնոյ ծառայ լինել, կերակուր պատրաստել, զաւակ ծնել...

Պարտքս՝ ազնուուհի հրատարակիչն իմ վերայ պարտա-

կանութիւն է զրել Մոսկուայից նամակներ զրել ըստ մեծի մասին նուիրեալ կանանց և օրիորդաց խնդրոյն: Անտարակոյս ես աշխատելու եմ ծանօթացնել Հայ կանայքը այն դրութեան հետ, որ ունին առհասարակ կանայք Եւրոպայում և աշխարհիս միւս մասներում, յուզանել նոցա ունեցած դերն ընդհանուր կրթութեան և դաստիարակութեան մէջ, ևս և մասնաջոյց լինել այն կանանց, որք ներկայ ժամանակումս երևել են հանդիսանում որ և իցէ զործով կամ աշխատութեամբ:

Ասորի:

Բ.

ԼՈՒՍԱՐԱՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ի Կ. ՊՕԼՍՈՅ:

Կ. Պոլս. 3 Նոյեմբերի 1880 թ.:

Չ'ԱՐԹԻՔ Թէ ծուլութիւնն է պատճառ լուրթեանս, զոր քանի մը ժամանակէ հետէ պահել ստիպվեցայ հակառակ խոստմանս՝ որով խոստացած էի երբեմն զրել ձեզ մայրաքաղաքիս մէջ անցած դէպքերուն վրայ: Ահանառու չլլալու համար այնպիսի տեսարաններու, որոնց վրայ Գեմոկրիա երկու ամիս կը խնդայ և Հերակղեա չորս տարի կուլայ՝ քիչ մը քաշված էի... Սոյն որոշումն թերեւս ասորքինակ թուի ձեզ հոգ չէ՝ աշխարհիս վրայ խաղալ և երջանիկ կեանք վարելու համար լուսագոյն ծանրան է այս...

Օսնոր է ինձ խոստովանիլ՝ թէ մարդերը մարդկութեան համար չեն ապրիր: Ամենայն հոգովոր իմաստասէրն ըսած է թէ՛ Հայրենիքէն վեր մարդկութիւնն կայ. այսօր մարդկութեան վեր շահ կայ և մարդկութեան վար ոչ ինչ: Մարդկութիւնը պաշտպանողները այսօր ծաղու նշառակ կը լլան. հետեւապէս մարդկութիւնը սիրողը չէ կարող մարդերու մէջ ապրիլ: Ար սիրեմ մարդկութիւնը, բայց, ներեցէք անքաղաքավարութեանս, կատամ մարդերը: Խօսքս պահած ըլլալու համար տահ այս օրէ կսկսիմ զրել և ասարակոյս չունիմ, որ դուք ալ պիտի համոզվիք՝ թէ մարդերու թերութիւնները տեսնելուս համար է որ չեմ սիրեր զանոնք և ոչ թէ զանոնք չսիրելուս համար անոնց թերութիւնները միայն կը տեսնեմ: Բայց ինչ պիտի շահնիք զրելով. միթէ անոնք պիտի ուղղեն իրենց սխալները, բնաւ երբէք: Այնպիսի ժամանակի մը մէջ կապրինք, որ ո՛ր է և զրութիւն մը այն նպատակին կը ծառայէ որու համար որ զրված չէ. թող տուէք որ երկու բառով բացատրեմ միտքս: Ժամանակաւ ամեն մարդ ողբերգութիւններու ներկայացումներուն հանդիսատես ըլլալ կը փափաքէր անոնց մէջ զիցցազնութիւն տեսնելու համար, այս օր ողբերգութիւններու մէջ պիցցազնութիւն փնտռող չկայ, այժմ ամեն մարդ ողբերգութեան մէջ կը փնտռէ գեղեցիկ դերասանուհի, շատ անգամ զիցցազնութիւնը կը սուլեն և սիրուն թեւերը կը ծափահարեն. իսկ այն ողբերգութիւնն՝ որու մէջ գեղեցիկ դերասանուհի չկայ, հազիւ մէկ անգամ կը ներկայացվի, երկրորդ անգամին ոչ ոք կերթայ տեսնել այդ ողբերգութիւնն ով որ ալ ըլլայ անոր հեղինակը, Սոփոկլէս, Ալֆիէրի, Քօնէյլ, Ռասին կամ Հէքսթեր... Աէպերն՝ որք ժողովրդեան վերբերը բուժելու նպատակն ունին, այս օր ուրիշ բանի չեն ծառայեր, այլ միայն սորվեցնելու մեր երիտասարդներուն թէ ինչ եղանակով կը յաջողեն հարուստ աղջիկ մ'առնելով փախչելու: Ուրիշ հազարաւոր օրինակներ ալ կը շարէի հոս, եթէ գիտնայի որ գլխու ցաւ չպիտի պատճառէի: Արդ, հարցունեմ այժմ, իմ նամակներս իրենց նպատակին պիտի հասնին. ոչ. ընթերցողներն կարծելով՝ թէ զերենք խնդացնելու նպատակաւ գրված են անոնք, կարգալով թերեւս քիչ մը պիտի խնդան, մինչ զեռ ես կը փափաքէի, որ իրենց մազերը փեթտելով, կուրծքերը ձեծելով և քուրձ զգենլով լային ու ողբալին իրենց պակասութիւններուն վրայ: Գոհ եղի՛ք՝ եթէ այսչափով լինայ գործը, կսկսին գրողը պարսաւել և հալածել: Թող Տիարըս պոսայ թէ՛ երգիծանքը մոլինները կը հալածէ և կատակերգութիւնը՝ մոլութիւնները: Արդարեւ երգիծանքը կը հալածէ մոլինները, բայց մոլիններն ալ չեն զաղրիր հալածելէ երգիծաբանները... Բայց ինչ որ ալ ըլլայ՝ որովհետեւ խոստացած եմ զրել՝ պարտաւոր եմ խոստումս գործադրել, թէպէտեւ Թուրք կառավարութիւնն ալ խոստացած էր վեց Տէրութիւններուն զրել այն բարենորոգումներն, զորս պիտի մեծաներ Հայաստանի մէջ և մինչև այսօր չ'ըրեց:

Հետաքրքիր էք հարկաւ գիտնալու թէ ինչ գոյն առաւ Հայկական խորհրդը: Առ այժմ նոր գոյն մ'առած չէ թէպէտեւ

շատերը վարդագոյն ցոյց տալ կուզեն զայն, բայց ես կը վախնամ, որ իւր առաջին գոյնն ալ չնետէ: Բարենորոգումն արդէն այնպիսի ապրանք մ'է՛ որ մայրաքաղաքիս մէջ իսկ մեծ դժուարութեամբ կրնայ մտնել, թող թէ Հայաստանի մէջ՝ որ փոխադրութիւնը դիւրացնելու համար ոչ չուզեաւ ունի և ոչ չուզեաւ: Աեց Տէրութիւնները Տուլչինեոյի առջև նաւատորմի մը զրկելով՝ ստիպեցին Թուրքիան Տուլչինեոն քարատաղէ յանձնելու, և Թուրքիան ծանուցագրով մը յայտնեց թէ՛ իւր անկեղծութեանն ապացոյց մը տալու համար որոշած է Տուլչինեոն քարատաղէ յանձնել *): Թուրքիան անկեղծութեան աւելի մեծ ապացոյցներ ալ ցոյց տուած է վերջին պատերազմէն ետքը Ռուսիայի, Անգլիայի, Աւստրիայի, Ռուսիայի, Սերվիայի և Պուլղարիայի այնչափ հոգեր տալով, բայց Հայաստանի խնդրոյն մէջ անկեղծութեան ապացոյց մ'ալ տալու արամազիր չերևիր, վասն զի գիտէ որ նաւային ցոյց չկրնար տեղի ունենալ Ամենայն մէջ՝ զոր քարաքաղեան Իֆէնտի իւր նոր Աշխարհագրութեանը մէջ Գիւրտտան փոխադրած էր և յետոյ իրեն ուղղված դիտողութիւններուն վրայ հաճած էր զայն նորէն Հայաստան բերելու: Եթէ քարաքաղեան Իֆէնտի Ամեն քաղաքը Միջերկրականի մէկ եզերքին վրայ բերեր՝ այն ատեն շատ դիւրին էր բարենորոգումներ մտցունել Ամենայն և... քարաքաղեան Իֆէնտի աշխարհագրութեանը մէջ: Անգղիական լրագիրներն՝ որք կը պնդէին թէ արևելեան առ կախ մնացած խնդիրները լուծելու համար թագուհուհոյ կառավարութիւնը մինչև վերջը պիտի աշխատի, այժմ կըսեն թէ Տուլչինեոյի յանձնըվելէն ետքը Անգլիան եթէ առանձին մնայ՝ աւելի առաջ չպիտի երթայ: Յիշեալ լրագիրներուն այս յայտարարութեան վրայ Հայկական խնդիրն ոմանք երազ անուանեցին, և ոմանք Եւրոպայէն բարեք յուսալն յիմարտիւն է հրատարակեցին: Ես Հայկական խնդիրն երազ չեմ համարիր, ոչ ալ Եւրոպայէն բարեք յուսալն յիմարութիւն. այլ կը հաւատամ, որ եթէ մենք ալ աշխատինք Հայաստանի վիճակն անպատճառ փոփոխութիւն մը պիտի կրէ դեպ ՚ի լաւն. մանաւանդ շնորհիւ Ս. Պատրիարքին՝ որ ամեն ճիգ կը թափէ, իւր ժողովրդեան ապագային համար: Բայց ներկայն ով պիտի խորհի: Սովը նորէն իւր սեւափետուր թեւերը կը պարզէ Հայաստանի մէջ. Սովելոց Յանձնաժողովը զթութեան հրաւեր կը կարգայ, հարուստներն շատերը պարահանդէսի հրաւեր ընդունած ըլլալով զթութեան հրաւերին ակամօջ չեն կարներ: Կառավարութիւնն իւր ամբարած ցորեանը կը պահէ սովեալ գաւառներու մէջ՝ որպէս զի ձմեռն աւելի սուղ գնով ծախէ... Եթէ սովեալներուն ալիւր հասցնելն անկարելի է՝ քառասուն օր անօթի մնացող աքթեօր թաննորին նամակ մը գրելու է, որ այս մասին հարկ եղած հրահանգները զրկէ մեզ՝ որպէս զի խեղճ սովեալներուն գոնէ մէկ երկու ամիս անօթի մնալու և եթէ կարելի է՝ բնաւ չուտելով ապրելու արհեստը սորվեցնենք: Եթէ աս ալ անկարելի է՝ գոնէ ՚ի նպատակ սովելոց պարահանդէսներ տալու է: Պարահանդէս մ'ալ ՚ի նպատակ Պ. Նորայրի Գաղղիարէն-Հայերէն բառարանին տալու է՝ որ ժամ առաջ տպվի և լինայ այս օգտակար գործը: Այո՛, բարեկամ, ընթերցասիրութիւնը շատ ողբալի վիճակի մէջ է գեռ, և ազգային հեղինակներն, խմբագիրներն ու թարգմանիչներն ապրեցնելու համար ՚ի նպատակ իրենց ներկայացումներ տալու պիտի ստիպվինք... Բայց որ չանցնիր որ Պ. Ղուկասեանի գրատան նոր հրատարակութիւն մը չ'յանձնըվի վաճառվելու համար: Ընթերցող չունինք և

*) Յանձնեցաւ Նոյեմբերի 16 ին: Հրատարակել:



ԹՈՒՃԻԿ ԵՒ ՍԱՐԹ ԿԱՆԱՅԷ:



ՄՈՍԿՎԱԿԱՆ ԱՐՄԵՆԻԻ ՀԱՐԱՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ:

չգիտեմ՝ թէ ինչու համար արգելք կը հրատարակին այս երկասիրութիւնները. կարծեմ թէ նիւթ մատակարարելու համար բանադատութեան, զոր Պ. Գրասէր Ատոմ կը շարունակէ գողարկի և դիւթիչ լեզուով: Մոնթէ Գրիստոյի հեղինակը, չեմ յիշեր որ բանադատին համար կըսէր, թէ՛ չիրնար անաչառ բանադատ ըլլալ՝ վասն զի ծերակուտի անգամ ըլլալ կուզէ: Պ. Ատոմ բանադատ ըլլալու արժանիքն ունի, բայց արգելք երեսփոխանական ժողովոյ մէջ աթո՞ւ մ'ունենալ կը փափաքի. չեմ կարծեր... Չմոռնանք և Պ. Բիւզանդէն, այն վառվռուն երիտասարդն, որ Մասիսի մէջ ազգային կենսական

խնդիրներու վրայ գեղեցիկ յօդուածներ կը հրատարակէ և կը յորդորէ Հայերն 'ի մէջ այլոց՝ որ քրտերու հետ բարեկամութիւն հաստատեն, թէպէտև Հայերն անոնց հետ, կարծեմ, թշնամութիւն հաստատելու դադարփարն բնաւ ունեցած չեն... Պ. Բիւզանդէն յօդուածները աւելի սիրով պիտի կարդացվէին՝ եթէ նուազ երկար ըլլային. վասն զի երկար գրութիւններէ չեն ախորժիր մեր ազգայինները: Ես ալ կը փութամ վերջացնել նամակս, որ երկար եղաւ, խոստանալով յաջորդ նամակովս Ազգային Ընկերութիւններու վրայ դրել:

Լոս-Անջելոս «Փարսի»:

Գ.

ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆ 'Ի ՓԱՐԻՉԻ:

1 Նոյեմբ. 1880. 26 rue des Batignolle.

Չեմ փափարանաց համեմատ կրփութամ զձեզ տեղակացնել Հայաստանի դժբաղդ Սովերոյ համար Փարիզու մասնաժողովոյ, ընդ նախադասութեամբ գերապատիւ Խորէն Սրբազան Արքեպիսկոպոսի և Լուսինեան Վսեմափայլ Իշխանուհւոյ ըրած ջանիցը և ձեռք բերուած արգետնը:

Հաղարտոր սրտաշարժ շրջաբերականներով և օրագրական աղէկատր աղերսագիրներով և յօդուածներով՝ զորս Փարիզու Մասնաժողովը շարադրեց, մեծ շարժում մը տեղի ունեցաւ և Հայ անունը՝ թէև ախոր առթիւ, անդադար յորջորջուեցաւ և ամենաշերտ համակրութիւն և զթուծիւն ամենուն սրտին մէջ արծարծուեցան մեր տարաբաղդ Հայրենակցաց համար:

Գաղղիոյ ամէն կողմերէն և Տէրութեան մեծամեծներէն շատ պատուաւթի և արդիւնաւատ նամակներ եկան: Մաշնաժողոյս հաւարած գումարը քսալ հազար Փոանք անցաւ:

Բայց ամենէն նշանաւոր ձեռնարկութիւնն՝ Վսեմափայլ Լուսինեան Մարիամ Իշխանուհւոյն *) 26 Յունիսի տուած նուագահանդէսն է, որուն առթիւ օտարազգի և գաղղիացի երեւելի անձինք՝ մինչև անգամ Հասարակապետութեան Վախազար և Նախարարք, բոլոր զեպանք և հիւպատոսք, երեսփոխանական և ծերակուտի ժողովոց անդամք, մեծ բարեւարութեամբ պատասխանեցին Ազգանուէր նուագահանդէսին առաջ նուէրներով և նոյն իսկ իրենց պատուարժան ներկայութեամբ: Քաղցր էր ազգասէր սրտի մը տեսնել առաջին անգամ լինելով Փարիզու մէջ, Հայկական յարկի տակ, այսպիսի շքեղ նուագահանդէս մը, որոյ ներկայ եղողները՝ արք և տիկնայք, ազնուականաց և մեծորէից չքնաղ խումբ մը և ամենազեղեցիկ ծաղկանց փունջ մը կը կազմէին:

Վսեմաշուք Իշխանուհին սոյն հանդէսին մէջ իւր սքանչելի և քաղցրանուագ ձայնիւր և աշխարհածանօթ վսեմ տաղանդովը զմայլեցող զհանդիսականս՝ Սոմնամպիլէն Ամինայի և Փոսթին Մաւկրոթի զժուար և բարձր զերերը ամենայն կատարելութեամբ ներկայացնելով և արտաբոյ կարգի քաղցր ներգաշնակութեամբ երգելով:

Թէ հանդիսականաց բուռն ծափահարութիւնը և թէ օրաւ

գրաց ջերմ գրուատիք մեծ բերկրութիւն պատճառեցին ազգաւորաց՝ տեսնելով մեր Հայաստան և բարեգութ Իշխանուհւոյն չնաշխարհիկ տաղանդը արժանաւորապէս գնահատեալ:

Նուագահանդէսին բոլոր ծախքերը՝ որ 'ի 2500 Փ-ի կը յանդին, Վսեմափայլ Իշխանուհին ինքնին վճարելով՝ ամբողջ արդիւնքը շրս հազար Փոանք Սովերոյ արուեցաւ: Այս գումարը՝ վերոյիշեալ ասար հազար Փոանքէն դուրս է:

Գերապատիւ Խորէն Սրբազան Արքեպիսկոպոսը իւր Փարիզ անցուցած ժամանակը՝ այս չափով չէ բաւականացաւ, այլ նաև տեսուցեցաւ բոլոր Գաղղիոյ և օտարազգի երեւելի անձանց հետ, Հասարակապետութեան Նախագահին, բոլոր Վախարարաց, երեսփոխանաց ժողովոյն նախագահին, զեպանաց և այլևայլ ծիղերու մէջ նշանաւոր անձանց հետ, Ազգային կարեւոր խնդրոց վրայ երկար և խոհուն խօսակցութիւններ ունեցաւ, բարեսիրտ և ազգօգուտ խոստմունքներ ստացաւ՝ որոնց մանրամասնութիւնները անգեպ է և կանխահաս հրատարակել, բայց արդիւնքները արդէն կերեւան և կը նշմարուին 'ի լուրջ մտաց:

Վսեմաշուք Գիւիտան Ա. Լուսինեան Իշխանին այս զանազան պարագայից մէջ ցցուցած ազգասիրական անխոնջ ջանքերը և առատաձեռն ստատարք մեծ շնորհակալեաց արժանի են, թէև արդէն ծանօթ են Հայ ազգին նորին Վսեմութեան բանասիրական օգտաւէտ երկասիրութիւնքն՝ որոնց նորանոր երախայրիք 'ի մօտոյ պիտի երևան:

Նամակիս վերջ չէ տուած պարտ անձին կը համարիմ հրատարակել՝ որ այս բազմազիմի ջանից բողոյական արդիւնքները խիստ շատ կը գերաշանցեն գնիւթական արդիւնքները և Հայոց ազգը Գաղղիոյ մեծ համակրութեանը և սիրոյն արժանացաւ և մեծ յառաջագիտութիւն մի առաւ իւր ապագայ յոյսերուն ասպարիզին մէջ:

Յ. Թիւյսի-գէան:

Ատենադպիր Փարիզու Մասնաժողովոյ և Հայկական նուագահանդէսի:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

Չ ըի վերայ ման գալ:— Հիւսիսային Ամերիկայում զանուած կենդանիք:— Նշեքարական երկաթուղի:— Հնչական գործի:

ՁՐԻ ԱՆԵՐԱՅ ՄԱՆ ԳԱԼ:

Ամերիկայի Նիւ-Խօրք քաղաքում կրեկցաւ մի մարդ, որ ման է գալիս ջրի վերայ նոյնպէս ազատ, որպէս և ցամաքի վերայ: Նորա գիւտն բաղկանում է երկու ցինկիայ մաշիկներից 5 Փուլթ երկայնութեամբ և 5 զիւլմ խորութեամբ: Այդ

մաշիկները թոյլ չեն տալիս, որ օդը մասնէ նոցա մէջ և ունին ծալքեր ծայրերում: Մաշիկի մէջ տեղում կայ ոտքի համար տեղ: Մաշիկների տակում կան երկու կարգ՝ հինգ հինգ հատ ոչ այնքան մեծ՝ թիակների: Յունիսի 23 ին (1880 ամի), գրում են Նիւ-Խօրքի Tribune անուն լրագրում, հնարին այդ մաշիկների՝ ոմն Սուլ անուն՝ անցաւ


*) Որի պատկերն ասպարում ենք ներկայ տետրիս մէջ: Հրատարակել:

Գարլէմ գետը, Բարձր կամրջին մօտ: Նա ծա-
նապարհ բացաւ իւրեան առանց զժուարութեան
չողենաւների, նաւերի և մակոյկների միջով, որք
զնում գալիս էին գետի վերայ: Զքի վերայ եղած
ժամանակ, նա աւելի շուտ նմանում էր սառուցի
վերայ սահող, քան ոտքով ման եկող մարդու:
Նա կարող է սահել առանց իւր ոտքերը բարձրա-
ցնելու: Սուլ կշռում է 125 ֆունտ և խոթում

երկայնութիւնն հասանում է 200 ֆութի, որ մեծ
բան է. իսկ կոկորդիլոսի ոսկերքն հասանում են
17 ֆութի, մինչ զեռ այժմեան կոկորդիլոսներն
հասանում են միայն 6 զիւլմ երկայնութեան:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ:

Նորերումս մի այլ զիւտ ևս յայտնուեցաւ:
Ելեկտրական զօրութիւնը 'ի գործ պիտի դրուի



ԲԺԻՇԿ ԹԱՆՆԷՐԻ ԾՈՄԱՊԱՀՈՒԹԻՒՆՆ:

է իւր մաշկները ջրի մէջ երկու և կէս զիւլմ
խորութեամբ: Ըստ երևութիւն նա շատ հեշտ ման
է գալիս ջրի վերայ. միայն փոքր ինչ թեքվում է:

երկաթուղիների վերայ և պիտի փոխանակէ շողին:
Մուշին փորձերը արդէն եղան և ըստ ամենայնի
յաջողեցան:

ՀԻՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԳՏՆՈՒԱԾ ԿԵՆԴԱՆԻՔ:

ՀՆՁԱԿԱՆ ԳՈՐԾԻ:

Հիւսիսային Ամերիկայում, ինչպէս հաղորդում
են անգղիական լրագիրք, գտնուեցան գետնի տակ
ահազին մեծութեամբ ծովային օձերի և կոկորդի-
լոսի ոսկրներ: Այսպէս, գտնուած մէկ օձի ոսկորի

Ինչի անունն ոմն, Անդոնում, հնարեց հնչական
մի փոքրիկ գործի, որ յաւելացնում է ձայնի զօրու-
թիւնը երգելու ժամանակ: Այդ գործին, որ շինվում
է ոսկրից, երգիչն ամրացնում է իւր բերանի մէջ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿԱՐԴԱ՝ ՈՒ ԿԻՍԱՆԱՍ

ԵՐԵՎԱՆԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ:

- Բարով, Պարուն Համբարձում: քեփդ վունց է:
- Շնորհակալ եմ, Գեորգ Արտեմիչ, ինքս լաւ եմ, բայց գործերն լաւ չեն:
- Ի՞նչ է պատահել: չէ՞ թէ շատ փէքր իս անում...:
- Թանգութիւն, Գեորգ Արտեմիչ, թանգութիւն: Մեր վերջն ուր պէտք է հասնէ, չեմ իմանում: Այս տեղ թանգութիւն, Ռուսաստան թանգութիւն, Հայաստանում սով, քրդերի ապստամբութիւն... Է՛, որ մէկն պատմեմ:
- Բաւ չը լսեցիր վուր ասում ին՝ թէ համբարձումն է հարկաւոր:
- Ի՛նչպէս չէ: Միտար Պրայն էլ ասել է Կ. Պոլսում: Թէ համբարձումն է հարկաւոր Հայերին, բայց փախում եմ, որ այդ համբարձումն չը նմանի Թուրքի առածին՝ «Էօլէ էլէֆէ» եւլ իւլէր եօնմա պէլիք»: Հոմ Թուր-



ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՍ:

- քերէն հասկանում ես: Եթէ մեր Հայաստանն էլ առածի էլին նմանի, վայ մեզ, լաւ միտարանք:
- Ի՛նչ, ինչո՞ւ իս էդպէս յուսահատվում, պարուն Համբարձում: Աստուած ողորմած է, կարելի է վերջն բարի կատարուի: Եթէ չը կատարուի էլ հոմ քիզ մնաւ չը կայ...
- Պուցէ, չեմ իմանում... Բայց այժմ մնաւ բարով, գնում եմ Մեղրին ու Մշակին բաժանորդ գրուելու, Յունուարը մտնելում է, Փարսին էլ փոշտով փող պէտք է ուղարկեմ: Ե՛կ գնանք, դու որ լրագրին ես գրվում:
- Ի՛նչ, դեռ չիմ իմանում: ո՞չ որ ինձ դեռ չէ՛ խնդրել: Կուհամբարձում, կուհամբարձում, որը աւելի էժան կուտան, նրան կուգրվիմ: Է՛, մնաւ բարով, իս էլ վրազում իմ, 50 պրոցէնտով փուզ տալու իմ, քսան հազար, մէկ տիպոգրաֆչիկի:
- Հա՛. է Աստուած յաջողութիւն տայ: Եթէ լաւ լինի... ցտեսութիւն Գեորգ Արտեմիչ: Մո՞՞՞՞՞:

ԺՅՄԱՐԻՑ Է:

Ղշմարիտ է որ Թուրք կառավարութիւնն Հայ Իշխանաց և Թագաւորաց պատկերներն գրաւած է և վաճառումը արդելած:

Ղշմարիտ է որ, ըստ Օսմանլիկ, «Հայկական Թագաւորութիւն մի՛ ծիծաղելի ինչ է. Հայկական ինքնօրինութիւնը՝ զաւեշտ մի է միայն. Հայք փոքրամասնութիւն են և լուրջ չէ Հայաստան մի երազել»:

Ղշմարիտ է որ, ըստ նոյն Օսմանլիկ, «Հայկական խնդիրն ծիծաղելի է այժմ, բայց կարող է մի օր լուրջ հանգամանք ստանալ»:

Ղշմարիտ է որ Կ. Պոլսոյ Ազգային Հիւանդանոցին ՚ի տերութենէն հաց ու միս արուիլն, Հայկական խնդրոյ պատճառաւ, դադարեցուցուած է:

Ղշմարիտ է որ կրօնքով ՚ի մէջ անջատեալ և պապականութեան յարեալ մեր համազգի եղբայր ոմանք Հայկական խնդրոյ ձեռնարկէն իւրեանց համար իբր թէ օգուտ քաղելու նպատակաւ՝ Ազգին վերայ նոր բարութիւն կը բարդեն:

Ղշմարիտ է որ Մեղրի և Մշակ լրագիրներն իւրեանց տարեկան վճարը ստանալու համար հարկադրուած են միշտ իւրեանց բաժանորդաց միան բերել նոցա պարտքը:

Ղշմարիտ է որ Մոսկուայի Համալսարանի ուսանող և հեղինակ «Մի զրոյց» տետրակի պ. Սետրակ Ա. Գաղեանց դաս է սկսում ընդէմ իւր ձեռնդեան քաղաքի անդրանիկ «Պսակ» լրագրին անպատուութեան համար:

ԹՂԹԱԳԻՐ



ՊԱՏԱՍԻՍԱՆԻՔ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

- Կ. Պոլիս. Առ Մեծ. Տ. Փ. Չեր ուղարկած Տիկին Ապրոյի և Պ. Պրայնի պատկերներն տպագրեցան ներկայ տետրիս մէջ:
 - Կ. Պոլիս. Առ Պ. Մ. Չեր ուղարկած Խրիմեան Հայրիկի պատկերն տպագրեցաւ ներկայ տետրիս մէջ:
 - Մոսկուայ. Ճանապարհորդ. Չեր մեզ տուած Վեհ. Հաջին Պարսից երէց որդւոյ պատկերն տպագրեցաւ ներկայ տետրիս մէջ:
 - Մոսկուայ. Առ Պ. Մ. Տ. Գ. Չեր մեզ տուած Տաթևայ վանաց պատկերն տպագրեցաւ ներկայ տետրիս մէջ:
 - Կարնի. Առ Գեր. Մ. Վ. Օ. Չեր ուղարկած Մշեցոց պատկերներն կը տպագրուին յաջորդ տետրիս մէջ:
 - Վան. Առ Մեծ. Կ. Չեր ուղարկած Աղթամարայ վանքի պատկերն և Վանցի Հայոց պատկերներն կը տպագրուին յաջորդ տետրակներէ մէջ:
 - Գաղեանք. Առ պ. Կ. Մ-Շ. Չեր ուղարկած չափածոյ բանքն կը տպագրուին:
- Հանդիսիս հրատարակիչն մատուցանում է վերոյիշեալ Մեծապատիւ Տեառց իւր խորին շնորհակալութիւնը «Փարոսը» ազգային պատկերներով հարստացնելու ջանից համար:
- «Փարոսի» հրատարակիչն յայտնում է նոյնպէս իւր ատ ՚ի սրտէ շնորհակալութիւնը այն ամենայն Աջնի Տիկիններին և Պատուելի Պարոններին, որք փութացին իւրեանց նամակներով շնորհաւորել նորա ձեռնարկութիւնը, ցանկալով հանդիսիս յաջողութիւն, երկարատեւութիւն և արգիւնաւորութիւն:

ՀԱՅԿԱԶԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐԸՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ի Փ Ա Ր Ի Զ :

Յայտնի է որ Փարիզու Հայ Գաղթականութիւնը հաստատած է 1879, Սեպտեմբեր 11-է ՚ի վեր, մի ընկերութիւն «Հայկազեան-Ուսումնասիրաց Ընկերութիւն» անուամբ, որ նպատակ ունի ազգային աղքատ պատանեկաց բարձրագոյն ուսմունքներ սովորեցնել տալ Եւրոպիոյ համալսարանաց մէջ :

Ընկերութեան նպատակի կարևորութեանը և նորա մատուցանելիք ծառայութեանցը վրայ ընդարձակօրէն խօսիլը մի այլ ժամանակի թողլով՝ պատիւ ունիմք առ այժմ ծանուցանել Ուսումնասէր Ազգայնոց, որ յառաջիկայ նոր տարիէ սկսեալ Փարիզու Հայ Գաղթականութիւնը պիտ'ունենայ նաև իւր ընթերցարանն ու թանգարանը, 47, Rue Feuilleantine, և որոյ բացման հանդէսը պիտի կատարի 1881, Յունվար 1-ին (ն. տ.) :

Փարիզու նման մի լուսուորեալ քաղաքի մէջ այս նման կազմակերպեալ ազգային կեդրոն մ'ունենալու պէտքն ու նշանակութիւնը այն աստիճան բացայայտ և զգալի խնդիր մ'է, որ աւելորդ կը թուի մեզ ընդարձակ բացատրութեամբ մատնանիշ առնուլ, թողլով նորա արդեանց ճանջընել ինքզինքը իւր գործերովը, և մենք վստահ այս

ապագային վրայ, մերազնէից ձեռնառութեանն ու օժանդակութեանը կարօտութիւննիս յայտնելով՝ կը բաւականանամք ներկայիւս դիմել Ուսումնասէր Գրադիտաց, ամենայն հայրենասէր Ազգայնոց, խընդրելով որ բարեհաճին չինայել իւրեանց գրական և նիւթական նուէրները յօգուտ և ՚ի զարգացումն «Հայկազեան-Ուսումնասիրաց ընկերութեան» և իւր ընթերցարանին ու թանգարանին :

Ի դիմաց «Հայկազեան-Ուսումնասիրաց ընկերութեան»

ԱՏԵՆԱԿՊԻՐ

Նիկողայոս Շերպէլեան :

ԱՏԵՆԱԳԵՏ

Սիմէոն Ռաֆայէլեան :

13 Գեկտ. 1880. Փարիզ :

Ծանօթ. «Հայկազեան-Ուսումնասիրաց ընկերութիւնը» պատիւ ունի միանգամայն յայտարարել ներկայիւս, որ պատրաստ է մատուցանել Աբբոյ հասարակութեան ամէն կարելի եղած ծառայութիւն և տալ իրմէ պահանջուած ամէն տեղեկութիւն, ինչպէս նաև մեծաւ հոգածութեամբ առաջնորդ հանդիսանալ ազգային ուսանողաց և ճանապարհորդաց, որք ՚ի հարկէ զանազան դժուարութեանց կրնան հանգուլ օտար երկրի մը մէջ :

Ընկերութեան վերաբերեալ նամակ կամ այլք հետեւեալ հասցէով ուղղուելու են. Monsieur Siméon Raphaëlian, Président de la Société Philomathique Arménienne de Paris, 47, Rue des Feuillantines, 47, Paris.

Մինչև առաջիկայ 1881 թիւ յունվար ամիսը ՀՈՒՇԻ քաղաքում կը ապագրվի և առանձին գրքով լոյս կը տեսնի ԲԵՓՅԻԻ «ԽԵՆԹԻ» անունով վիպասանութիւնը : Տպագրութիւնը կը լինի գեղեցիկ և մաքուր թղթի վրայ : Խւրաբանչիւր գրքի գինը կանխապէս Բաթանոյք գրվողների համար նշանակվում է 1 ուրբի : Իսկ ապագրութիւնից յետոյ գնողների համար գինը կը բարձրանայ : Պ. պ. բաթանոյքները թող բարեհաճեն իրանց վճարը ուղարկել այս հասցէով. Шума. АВЕЛЮ ДАВИДОВИЧУ АПРЕСЯНЦУ. Въ конторѣ АРУНЯНЦА.

Հրատարակիչ ԱԲԷԼ Գ. ԱԳՐԵՍԵԱՆԵՑ :

ՄԵՎԵԼԻԻ ՕՐԵՅՈՅՅ 1881 թ. Վ., հանդերձ ԾԱԳԼԻԿ ԸՆՏԵՆԵԼԸ յաւելուածով, պատկերազարդ, Ե. Գուլամիրեանց. գինն է՝ 40 կ.

ՓՈՒՐԵԼԻԻ ՕՐԵՅՈՅՅ 1881 թ. Վ., պատկերազարդ, Ե. Գուլամիրեանց. գինն է՝ 10 կ. վաճառվում են հրատարակչի մօտ (Երևանում) :

ԵՐՈՒՆԵՂԻ ԵՐԿՐՈՐԳ՝ Ողբերգութիւն, հինգ արարուածի մէջ. Նիկողայոսի Յ. Ալիսանեան. վաճառվում է հեղինակի մօտ (Маѣконъ, Кѣб. Обл.) :

ՀՍԱՅԱԿԱՆ ՉԵՌԲԵՐ, Անդղիական Վէպ, պատկերազարդ, աղայոց ընթերցանութեան համար. Գինն է 10 կ. (սակաւալիս) :

ԵՂԵԱՅԻ ԵՒ ՔՈՅԻ, Գերմանական Վէպ, պատկերազարդ, փոքր աղայոց ընթերցանութեան համար. Գինն է 30 կոպ.

ԱՐՔԱՅԱԿՈՒՍՏԻ-ՎԱՐԿԵՆԻ, Գերմանական Վէպ, պատկերազարդ, փոքր աղայոց ընթերցանութեան համար. Գինն է 35 կ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Կաթողիկոսաց Էջմիածնի ՚ի Սիմէոնէ մինչև ջՅովհաննէս Ը. ամբ Տեառն 1763-1831: Գրեալ ՚ի Մսերայ Մազիտարոսէ Մսերեանց Չմիւռնացոյ : Մոսկուա, 1876. 306 երես. Գինն է 2 ո.

վաճառվում են «Փարոսի» խմբագրատանում :

„МАЯКЪ АРМЕНИИ“ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ,

НА АРМЯНСКОМЪ ЯЗЫКЪ,

ИЗДАВАЕМЫЙ ВЪ МОСКВѢ

СОФІЕЮ МСЕРІАНЦЪ.

№ 1.

ГОДЪ ТРЕТІЙ.

1881 ГОДА.

ԲՈՎԱՆԻՆԵԿՈՒԹԻՒՆ

	Էջ.
Ա. Տիկին Անժէլ Ապրո	1
Բ. Ա. Բարձրաշնորհ և ամենապատիւ Տ. Տ. ՆԵՐՍԷՍ սրբազան Պատրիարք և Ազգանուէր բարերարն Հայոց	2
Գ. Կոմս Լոռիս-Մէլիքով	—
Գ. Աւետարներ Հայաստանեայց	3
Ե. Միրզայեան Մանուկ Պէյ, պատմութիւն վարուց նորա: Հարունսիրտիւն. ԳԼ. Զ.	—
Զ. Կ. Պօլսոյ Հայն	6
Է. Հասարակական կարծիքի գոյանալն Անգղիոյ մէջ	7
Ը. Նահատակք Գիտութեան. ԳԼ. Ա.	9
Թ. Հայ Աշխարհ	11
Ժ. Հազարամիջ Վալսոյ Զէլլա-Սօլթան Մասուդ Միրզա	—
ԺԱ. Մարենսբրոն-Ֆիւն	14
ԺԲ. Հայկազնեան Տարեգիր	15
ԺԳ. Գիտութեան և Արտեսար	26
ԺԴ. Այլ և այլ	28
ԺԵ. Չանաչան Գիտելի (Հապի 2 և 3 երեսներով):	

ՅԱՆԿ ՊԵՏԿԵՐԵՅ

- Ա. Ժամանակակից Հայկազնեան: — Ա. Տիկին Անժէլ Ապրո (էջ 1): — Բ. Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան (էջ 9): — Գ. Իշխանուհի Մարիամ Լուսինեան (էջ 17): —
- Բ. Վանորայտ Հայոց: — Ա. Տաթևայ վանքն ՚ի Սիւնեայ գաւառի (էջ 8): —
- Գ. Աղբայի Բարսեղեան: — Ա. Կոմսութեան նշանակն Լոռիս-Մէլիքովն (էջ 5): —
- Դ. Ժամանակակից երևելի Տարեգիր: — Ա. Զէլլա-Սօլթան Մասուդ Միրզա՝ երեց որդին Հասին Պարսից (էջ 13): — Բ. Հասարակական Պարսոյ (էջ 20): —
- Ե. Բնութիւն: — Ա. Մոմեղէն Արմաւենի (էջ 25): —
- Զ. Աղբայ աշխարհի: — Ա. Հողագործ Բուլլարք (էջ 4): — Բ. Թուճիկ և Սարթ կանայք (էջ 24): —
- Է. Տեսարան աշխարհի: — Ա. Վաճառանոց ՚ի Սամարքանդ (էջ 12): — Բ. Գուլչինեո քաղաք Ալբանիոյ (էջ 16): — Գ. Թուրքաց քերականութեայ ՚ի Թեսաղլոնիքէ (էջ 21): —
- Ը. Ժամանակակից գիտութեան: — Ա. Բժիշկ Թանկերի ծովագահութիւնն (էջ 27): —

Փարոս Հայաստանի հանգէսը ստանալ ցանկացողքն իրեանց նամակաց հասցէն գրելու են այսպէս. Вѣ Москвѣ, Меньшикова башня, домъ Милованова, Ея Превосходительствѣу Издательству „Маяка Арменіи“ Софійѣ Мсеріанцѣ. Տարեգրութեան հայր կարող են բաժանորդ գրուել դիմելով ՚ի Կ. Պօլսոյ առ Պ. Միրզա Մսերեան, Ամս ալթը Բարազ խանի ձու, Թիւ 26, կամ ՚ի Զմիւռնիա՝ առ Պ. Գրիգոր Մսերեան, ՚ի Սիւլիկ խան, վերի յարկ, Թիւ 17, և կամ ուղղակի դիմել առ հրատարակիչն, իրեանց նամակաց հասցէն գրելով այսպէս. à Son Excellence M-me Sophie Missériantz, à Moscou, Menchikowa bachnia, maison Milovanoff.

Խմբագիր Խաչատուր Խաչենեանց: Հրատարակիչ Սոֆիա Մսերեանց: